ԱԶԳՈՒԹՅՈՒՆ՝ ԵԶԴԻ,
ԼԵԶՈՒ՝ ԵԶԴԻԵՐԵՆ,
ԿՐՈՆՆ՝ ՇԱՐՖԱԴԻՆ



ԱԶԻԶ ԹԱՄՈՅԱՆ

Եզդի ժողովրդի ազգային հերոս, եզդի ժողովրդի պատմագիտության և աստվածաբանության դոկտոր, պրոֆեսոր, Աշխարհի և Հայաստանի եզդիների ազգային միությունների պրեզիդենտ

ԵԶԴԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՍԽՐԱՆՔԸ

ԵԶԴԻՆԵՐՆ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏՈՒՄ

«ՎՄՎ-ՊՐԻՆՏ» Հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ 2002

Գիրքը տպագրվել է

ՀՀ պաշտպանության նախարարության
և անձամբ նախարար ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ
հովանավորությամբ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Արցախյան հերոսամարտում եզդի ժողովրդի սխրանքին, զոհված եզդի ազատամարտիկներին նվիրված այս գիրքը փառքի լուսապսակ է տասնյակ ու տասնյակ եզդի ազատամարտիկների համար, որոնք Արցախյան հերոսամարտի օրհասական օրերին նետվեցին կռվի, պաշտպանեցին հայոց հողը, կատարեցին իրենց նախնիներից ավանդված պատգամը, որ պետք է միշտ և ամենուրեք կանգնած լինել հայ եղբայրների կողքին, ամրապնդել դարավոր բարեկամությունը երկու ժողովուրդների միջև, բարձր պահել եզդի անունը, եզդի ժողովրդի արժանապատվությունը:

Եվ ինչպես դարասկզբում Սարդարապատը դարձավ փորձաքար այդ բարեկամությունն ամրապնդելու համար, երբ Ջահանգիր աղան իր ջոկատներով նպաստեց հայոց հաղթանակին, այնպես էլ Արցախը դարձավ նորօրյա բարեկամության վկայագիր, մի նոր փորձաքար, երբ եզդի ժողովրդի զավակները Ազիզ Թամոյանի ղեկավարությամբ նետվեցին ճակատագրական մարտի, այս անգամ պաշտպանելու հայոց հողը Արցախը Հայաստանին միավորելու մեծ գաղափարը: Նրանցից շատերը իրենց կյանքը նվիրաբերեցին հայոց հողի համար, հանուն նաև եզդի ժողովրդի հարատևման: Այս գիրքը, որ ապրողներիս սրտի խոսքն է եզդի երիտասարդների անմահության մասին, թող լինի Շեխ Ադու օրհնությունը նրանց հոգիների, նրանց հավերժության համար:

Համոզված ենք, որ գրքի հետ միասին յուրաքանչյուր եզդի ընտանիք կմտնի հավերժ կենդանի եզդի ազատամարտիկը, որ կռվի մեկնեց նաև այդ ընտանիքի համար, որ կյանքը զոհաբերեց հանուն նրա, որ եզդիների նոր ընտանիքներ ստեղծվեն, ուրախ ու անհոգ մեծանան եզդի երեխաները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵԶԴԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՆՎԻՐՅԱԼՆԵՐԸ

ԱԶԻՋ ԹԱՄՈՅԱՆԻ ՄԵԾ ԱՎԱՆԴԸ

Անցնում են օրեր, ամիսներ, տարիներ, սակայն չի խամրում այն փոթորկոտ օրերի հուշերը, երբ ոտքի ելավ մի ողջ ժողովուրդ՝ պաշտպանելու իր հողն ու ազատությունը, արժանապատվությունն ու ազատ ապրելու իրավունքը:

... Երբ սկսվեց Արցախյան հերոսամարտը, տեղի ունեցան ճակատագրական իրադարձություններ, սրբագրվեց պատմությունը, վերականգնվեց ճշմարտությունը, ծնունդ առավ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Հաղթանակը ձեռք բերվեց զոհերի և զոհողությունների, անօրինակ սխրանքների ու նվիրումի փառավոր էջերով: Ու այդ էջերից կրկին ու կրկին հառնում են սիրելի դեմքեր ու անմոռաց դեպքեր, որոնց փառքն ու անմահությունը կապրեն պատմության պայծառ էջերում:

Այդպիսի նվիրյալ դեմքերից է Ազիզ Թամոյանը, եզդի ժողովրդի արժանավոր զավակը, որն իր գործունեությամբ նոր էջ բացեց եզդի և հայ ժողովուրդների դարավոր բարեկամության տարեգրության մեջ, դարձավ այդ մեծ բարեկամության նորօրյա խորհրդանիշը:

Այս ամենն ասվում է այն փոթորկոտ օրերի ականատեսի վկայությամբ, երբ իմ բարեկամ, անվանի հայ արևելագետ, պրոֆեսոր Գ. Ասատրյանի հետ կազմակերպվում էին տարբեր միջոցառումներ, տեղի էին ունենում հանրահավաքներ, հնչում էին կոչեր՝ կանգնել հայ եղբայրների կողքին, սատարել արցախցիներին, մեկնել ռազմադաշտ՝ զենքով պաշտպանելու հայոց հողն ու հայ և եզդի ժողովուրդների ազատ ապրելու իրավունքը:

Երբեք չեն մոռացվի Ազիզ Թամոյանի ելույթները Կոտայքի մարզի Զովունի գյուղում տեղի ունեցած հանրահավաքներում, երբ նա արտահայտեց իր ժողովրդի կամքը՝ կանգնել հայ եղբայրների կողքին, միասին կռել հաղթանակը: Հանրահավաքները շարունակվում էին, դրանց մասնակցում էին հազարավոր եզդիներ, և Ազիզ Թամոյանն իր կրակոտ ելույթներով, եզդի ժողովրդի իղձերն արտահայտելով, ժողովրդին ոգևորելով՝ փաստորեն դարձավ ժողովրդի նվիրյալ առաջնորդը:

Զովունի գյուղից, ուր տեղի ունեցավ հարյուրից ավելի հանրահավաք, ոգևորության ալիքն անցավ հանրապետության մյուս շրջանները: Եվ ամենուրեք՝ Արտաշատում ու Արմավիրում, Արարատյան դաշտի եզդիաբնակ գյուղերում, Երևանի պետական համալսարանում, ուր տեղի էին ունենում հանրահավաքներ, ելույթ էր ունենում Ազիզ

Թամոյանը, ոգևորում, ոգեկոչում էր եզդի երիտասարդներին, նրանց մղում պայքարի և հերոսության: Եվ ոչ միայն հանրահավաքներում: Այդ ժամանակ էր, որ ստեղծվեց Ղարաբաղյան շարժմանը նպաստող կազմկոմիտե, որում ընդգրկվեցին շարժման ակտիվիստները: Կազմկոմիտեի նախագահ ընտրվեց Ազիզ Թամոյանը: Նրա մեծ ջանքերով էր, որ այդ օրերին եզդի ժողովուրդը համախմբվեց, ստեղծվեց կազմ կոմիտեին կից ռազմական շտաբ, որի պետ ընտրվեց Քյարամ Ավդոյանը: Եզդի կամավորականները շատ էին, ուստի ռազմական շտաբն ուղղորդում էր եղբայրական եզդի ժողովրդի զավակների բուռն շարժումը, ընտրում առավել տոկուն ու գործիմաց երիտասարդներին: Ռազմական շտաբի անդամները Ազիզ Թամոյանի ղեկավարությամբ և պրոֆեսոր Գ. Ասատրյանի մշտական աջակցությամբ բազմիցս եղան ղարաբաղյան ռազմաճակատների գրեթե բոլոր հատվածներում: Նրանք եղան Ստեփանակերտում, Լաչինում, Մարտակերտում, Երասխավանում, Ոսկեպարում, Մեղրիում ... Այդ ճակատամարտերի, նրանց մասնակիցների, մասնավորապես Ազիզ Թամոյանի մասին ուղղակի մարտի դաշտերում եզդի ազատամարտիկները երգեր էին հյուսում, երգում էին կռվի մեկնելիս: Պատերազմն ամենուրեք անակնկալներ էր մատուցում, որոնք կարող էին ճակատագրական լինել, խլել մարդկային կյանքեր: Այդպիսի արտակարգ դեպք պատահեց Ազիզ Թամոյանի հետ, երբ նա ֆիդայիների հետ գնում էր դեպի Նոյեմբերյան: Ոսկեպար չհասած՝ նրանց ճանապարհը կտրեցին ավտոմատներով զինված խորհրդային զինվորները և ադրբեջանցի օմոնականները, կոպտորեն վերաբերվելով՝ նրանց տարան շտաբ, խուզարկեցին, հարցաքննեցին: Գերությունը տևեց հինգ ժամ, և միայն Ազիզ Թամոյանի հնարամտությունը փրկեց նրանց: Ավելին, վերադարձի ճանապարհին, ոլորանից դուրս եկած զրահամեքենան խոյացավ նրանց վրա, փորձելով շրջել մեքենան: Խուսափելով ընդհարումից՝ ավտոմեքենան անցավ վտանգավոր հատվածը: Մի այլ անգամ՝ Երասխավանի ճանապարհին, Ազիզ Թամոյանը և նրա մարտական ջոկատը հայտնվեց թշնամու կրակի տարափի տակ: Ազիզ Թամոյանը հրամայեց պատասխան կրակ բացել, որից հետո միայն թշնամին լռեց: Մարտերին մասնակցելուց, եզդի ազատամարտիկների հետ հանդիպելուց բացի, Ազիզ Թամոյանը ծավալում էր հայրենասիրական, կազմակերպչական այլ աշխատանքներ ևս: Նրա աջակցությամբ եզդիների ազգային միության նախագահությունը հայտարարեց դրամական միջոցների հանգանակություն, և եզդի ժողովուրդը արձագանքելով Ա. Թամոյանի կոչին, հավաքեց 6 միլիոն ռուբլի, որը հանձնվեց ՀՀ պաշտպանության նախարարությանը և Արցախի օգնության հիմնադրամին:

Եզդի ժողովուրդը ևս Արցախյան հերոսամարտերում մեծ կորուստներ կրեց: Նահատակվեցին երեք տասնյակից ավելի եզդի ազատամարտիկներ: Նրանցից երեքի՝ Իսմայիլ Շարոյանի, Թեմուր Զեյդինյանի և Գագիկ Հաջոյանի աճյունները հանգչում են Արցախյան ազատամարտի հերոսների կողքին՝ Եռաբլուրում: Ազիզ Թամոյանի շնորհիվ եզդի ազատամարտիկների շիրիմները միշտ ծածկված են լինում թարմ ծաղիկներով՝ վառ պահելով ընկածների հիշատակը:

Անուշադրության չեն մատնվում նաև զոհված եզդի ազատամարտիկների ընտանիքները: Եզդիների ազգային միությունը, որի պրեզիդենտն է Ազիզ Թամոյանը, հոգատարությամբ է շրջապատել նրանց, ծանոթ է նրանց հոգսերին և մտահոգություններին, աշխատում է միշտ օգտակար լինել զավակներ կորցրած ընտանիքներին:

Դեռևս 1992 թվականին Եզդիների ազգային միության նախագահությունը սահմանել էր «Եզդի ժողովրդի ազգային հերոս» պատվավոր կոչումը: Եվ Ազիզ Թամոյանը առաջիններից էր, որ արժանացավ այդ պատվավոր կոչմանը: Նա ոչ միայն արժանացավ այդ կոչմանը և հերոսի ոսկե աստղին, այլև դրանով ստանձնեց նոր պարտավորություններ, դարձավ իր հերոս նախնիների արժանավոր ժառանգորդը և օրինակ գալիք սերունդների, եզդի երիտասարդության համար:

Ազիզ Թամոյանի մասին ասվածը թերի չլինելու համար մեջ բերենք Եզդիների ազգային միության պաշտոնաթերթ «Եզդիխանայում» տպագրված հաղորդագրությունը. «Եզդի ժողովրդի դարավոր պատմությանը նվիրված «Մենք եզդի ենք» պատմավավերագրական, «Անմահ է քո սխրանքը, եզդի ազատամարտիկ» գրքերի, մամուլում եզդիների կյանքին ու ճակատագրին նվիրված հրապարակային հոդվածների, ռադիոյով և հեռուստատեսությամբ ունեցած հանրամատչելի զրույցների, եզդի ժողովրդի պատմությանը, կրոնին և աստվածաբանության հարցերին առնչվող հոդվածների և ելույթների, անբասիր մանկավարժական գործունեության համար Ազիզ Թամոյանին շնորհել եզդի ժողովրդի պատմագիտության և աստվածաբանության պատվավոր դոկտոր-պրոֆեսորի կոչում»: Պատահական չէ, որ Ազիզ Թամոյանի մարտական ընկեր, դոկտոր, պրոֆեսոր Գառնիկ Ասատրյանն ասել է. «Ազիզ Թամոյանի անունը պետք է դրվի ոչ միայն եզդի, այլև հայ հերոսների հետ միևնույն շարքում»:

Ազիզ Թամոյանին լավ գիտեն եզդիաբնակ բոլոր գյուղերում, բոլոր համայնքներում: Եզդիները գիտեն, որ իրենց թիկունքում կանգնած է եզդիների ազգային միությունը, նրա նախագահությունը, անձամբ Ազիզ Թամոյանը: Իսկ դա և՛ պատվաբեր է, և՛ պարտավորեցնող: Ամփոփելով՝

կարելի է ասել. հիրավի, Ազիզ Ջամոյանի կյանքն ու գործը հայ և եզդի ժողովուրդների դարավոր եղբայրության ու զինակցության լավագույն առհավտչյան են:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՖԱՐՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Աշխարհի ժողովուրդների «էլիտա» ակադեմիայի անդամ,
Երևանի պետական համալսարանի
թուրքագիտության ամբիոնի վարիչ

EZDIKI.COM

ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ՈՒՂԵԿԻՑՆԵՐԸ

Ազգային-ազատագրական շարժումներն ունենում են իրենց հերոսները, իրենց նվիրյալները, որ հանուն իրենց սուրբ նպատակի պատրաստ են զոհաբերելու ամենաթանկը՝ կյանքը, որ գնում են դեպի ստույգ մահը... և անմահանում, լուսավոր ու պայծառ էջեր թողնելով հարազատ ժողովրդի պատմության հերոսամատյանում:

Եզդի ժողովրդի զավակներն իրենց սխրանքով ապացուցեցին այդ ճշմարտությունը:

...1988 թվականն էր: Հայ ժողովուրդն այլևս չտանելով պատմական անարդարությունը՝ պոռթկաց ցասումով: Սկսվեց Ղարաբաղյան շարժումը, որը փաստորեն ազգային-ազատագրական պայքարի նոր փուլ էր հանուն արդարության, հանուն հայոց հողերի միավորման, հանուն ժողովրդի հարատևության: Եվ Հայաստանում ապրող եզդիները, որ հայոց հողը համարում են նաև իրենց հայրենիքը, չէին կարող անտարբեր լինել այդ հուժկու շարժման նկատմամբ և, Ղարաբաղյան շարժմանը զուգընթաց, սկսվեց նաև եզդիների ազգային զարթոնքը:

1988 թվականի փետրվարյան օրերն էին: Ես, որ ականատեսն եմ այդ օրերի իրադարձությունների, հիշում եմ հատկապես այն ոգևորությունը, որ ապրում էր եզդի երիտասարդությունը: Դա չտեսնված մի երևույթ էր, որ վաղուց չէր զգացվել եզդիների կյանքում:

Կազմվեցին ռազմական ջոկատներ, որոնք ուղարկվեցին ռազմաճակատների գրեթե բոլոր տեղամասերը, եղան ամենաթեժ հատվածներում՝ Երասխավանում, Ոսկեպարում, Ստեփանակերտում, Շուշիում, Լաչինում, Մարտակերտում և այլուր: Ամենուրեք եզդի տղաները կռվում էին անձնուրաց կերպով: Նրանք տեղաբաշխված էին ոչ թե առանձին խմբերով, այլ հայ ազատամարտիկների հետ միասին, ու շտաբի անդամները իրենց սրտի խոսքն էին ասում ոչ միայն եզդիներին, այլև հայ տղաներին, ոգևորում ու քաջալերում էին նրանց: Հպարտության զգացում էին ապրում շտաբի անդամները, երբ մարտական դիրքերում տեսնում էին ոչ միայն եզդի տղաների, այլ նաև եզդի աղջիկների, որոնք իրենց եղբայրների նման կռվում էին քաջաբար, պատրաստ էին իրենց կյանքը զոհաբերել հանուն հաղթանակի: Նրանցից մեկը՝ Ասյա Խատոյանը, կռվում էր լեգենդար Մոնթեի ջոկատում:

Եզդի ազատամարտիկները կռվում էին ղարաբաղյան բոլոր ռազմաճակատներում, նրանց անունները և գործած սխրանքները հաճախ էին հիշատակվում մարտական ամփոփագրերում, նշվում էին

նրանց խիզախությունը, հերոսությունը, անձնուրացությունը, իսկ դրա ապացույցն այն իրողությունը, որ եզդի երիտասարդությունը միշտ բարձր է պահել իր արժանապատվությունը, միշտ արժանացել է իր հայ եղբայրների, հայ ազատամարտիկների, նրանց մարտական ջոկատների հրամանատարների խրախուսանքին ու բարձր գնահատականին: Եվ պատահական չէ, որ եզդի շատ ազատամարտիկներ արժանացան մարտական պարգևների, մեդալների:

Եզդի ազատամարտիկները գիտեին, որ իրենց թիկունքին կանգնած է եզդի ժողովուրդը, գիտեին, որ իրենց յուրաքանչյուր սխրանք հպարտությամբ է լցնում մայր ժողովրդի սիրտը: Գիտեին, որ ոչ միայն բարի խոսքով, այլ նաև նյութական մեծ օգնությամբ են եզդիները նպաստում հաղթանակի գործին: Պետք է հպարտությամբ հիշել, որ Արցախյան պատերազմի ընթացքում Եզդիների միության ջանքերով հանգանակվեց վեց միլիոն ռուբլի, որն այն ժամանակ հսկայական գումար էր և մեծ օգնություն: Այդ գումարը հանձնվեց Ղարաբաղի օգնության հիմնադրամին, ՀՀ պաշտպանության նախարարությանը, ազատամարտիկների ընտանիքներին:

Պատերազմն ամեն օր անակնկալներ էր մատուցում, որոնք կարող էին ամեն վայրկյան ճակատագրական լինել ու արժանանալ մարդկային կյանքեր:

Բայց կային նաև այլ իրավիճակներ, երբ մոռացած թշնամու կրակն ու մահվան վտանգը, հաղթում էր կյանքը, ծնվում էին երգեր, որ ոգևորում ու կռվի էին տանում բոլորին:

Ահա մի գեղեցիկ ու սրտամոտ երգ, որ հանպատրաստից հորինեցին եզդի մարտիկները մի մարտից հետո:

Ուզում եմ երգն ամբողջությամբ մեջ բերել՝ եզդիերեն խոսքը ներկայացնելով հայերեն տառերով:

Ահա այն.

ՇԸՌՒ ԵՐԱՍԽԵ

Ճըմե ըրըզ տեյը լըմը-լըմը,
Էվարդա սըր կավըլա գընդե Երասխեդա գըրտիէ ջըրդա ըջըմը,
Ըրաֆե մըիդանե խուն դընքըշը վակը ճըմը.

Ազիզե Ամար-բավե Սըիիդ ժը Ռըվանէ-
Դըկը գազի: Գըլի բըրա, իրո Ռավընը վե մըիդանե,
Ըմ գըրըկե սըրե խվը դաինըն բոնա Ռըհինա ըրմինըստանէ.

Ճըմե ըրըզ վէ դըքըշը խըլը-խըլը,
Սեվդինէ Ալի դըկը գազի: Ազիզ բավե մըն կըրըվի, բըդը սըր խվը
խորտէ էզդիա-չընդ կըբիլը,
Պըշտի խըդե նըֆըրէ էզդիա գընդե Երասխէ դըստե դըժմըն
դըրխըն հեսիրե-դիլը.

Ճըմե ըրըզ վէ դըգըշը, դորը-գըզը,
Գընդե դորե թըմամ գըրտիե բախ ու ըզը
Ազիզե Ամար դըկը գազի, գըլի էզդիա, իրո ըջըմա հըլդըն հըիֆա
կըվըն ու թըզը.

Վե բահարե գընդե Երասխե գըրտիը չընգը,
Ազիզե Ամար, Օմըր, Ալո, Սիհդ, Գառնիկ, դաիը դընգը:
- Բավե մընվըն, չեվըն, չէ բըխըվտըն, իրո էզդիա,
ըրմընիա դըրխըն դըրե տընգը.

Սըվըբու, բըրե սըվե լը մը չալ բու,
Դընգե ճըկ, սիլիե էզդիա, ըրմընիա հըվդը լալբուն,
Ջըրդա ըջըմա ըրաֆե մըիդանե բեփըրգալբու:

Այն օրերին, երբ Արցախի հողն այրվում էր արկերի պայթյուններից, երբ օդում հռնդում էին թշնամու ինքնաթիռները և մահաբեր արկեր էին նետում ազատամարտիկների դիրքերի վրա, ուրախ լուրը, թե եզդիների ղեկավարությունը եկել է ռաղմաճակատ, թե եզդիների հերթական օգնությունն է տեղ հասել, հպարտությամբ էր լցնում եզդի ազատամարտիկների սրտերը, նրանք զգում էին, որ իրենց թիկունքին կանգնած էին իրենց ժողովուրդը, ընկերներն ու բարեկամները:Մեր հայրենակիցները մեզ տեսնելով ոգևորվում էին, խոստանում էին լավ ծառայել, բարձր պահել եզդի անունը: Այո՛, հայոց հողի պաշտպանությունը ինչպես յուրաքանչյուր հայի, այնպես էլ եզդիների սուրբ պարտականությունն էր այդ ծանր ու դժվարին օրերին:

Բայց պատերազմն առանց կորուստների չի լինում: Ու հանկարծ տխուր լուրն էր տարածվում ողջ ռազմաճակատում.

- Ագիտը վիրավորվել է...
- Թեմուրը զոհվել է...
- Բըրոն անհետ կորել է...

Դեռ չէին մեղմանում ցավն ու կսկիծը անդառնալի կորուստների համար, երբ նորից ռաղմաճակատով մեկ ու միևչև Երևան, միևչև հեռավոր մարզերը հասնում էր բոթը.

- Ընկել է Սահիդը...

- Չկա Բարգանին...
- Զոհվել է Տիտալը...

Ու գնում, գնու՜մ էին լավագույնները, իրենց ջահել կյանքն էին նվիրաբերում Արցախին, սուրբ նպատակին.

- Զոհվել է Ուսըվը...
- Չկա Սաբրին...
- Զոհվել է Ռաշիդը...
- Անհետ կորել է Կոտիևը...
- Դուլիխանը չկա այլևս...

Ու այսպես շարունակ...

Եզդի ժողովրդի երեսունից ավելի զավակներ իրենց կյանքն ավարտեցին ջահել հասակում, նրանցից շատերը չհասցրին ամուսնանալ, զավակներ ունենալ, տուն ու տեղ դնել...

Ճակատագիրն անողոք գտնվեց նրանց նկատմամբ, կռիվը խլեց նրանց մատաղ կյանքը:

Արցախից Հայաստան էին բերվում զոհված ազատամարտիկները: Նրանցից երեքի՝ Իսմայիլ Շարոյանի (Իսո), Թեմուր Զեյդինյանի, Գագիկ Հաջոյանի աճյունները հողին հանձնվեցին Եռաբլուրում՝ Արցախամարտի զոհերի պանթեոնում: Հետագայում, Հայաստանի անկախության 7-րդ տարեդարձի առթիվ, դեպի Եռաբլուր գնացող ճանապարհին կառուցվեց Հաղթակամար, որ խորհրդանշում էր զոհված ազատամարտիկների հաղթանակը, անմահությունն ու փառքը:

Եզդի ժողովուրդն այդ Հաղթակամարը իրավամբ համարում է նաև իր զավակների հաղթանակի ու հերոսության վկայականը, որի կամարի տակով անցնելով՝ այցի է գնում հերոսների շիրիմներին, որոնց վրայից չեն պակասում անթառամ ծաղիկները:

Իհարկե, Արցախյան հերոսամարտից հարյուրավոր եզդիներ վերադարձան հաղթանակով, յուրաքանչյուրը շարունակեց իր գործը՝ պարտքը կատարած մարդու վստահությամբ: Նրանցից շատերը տուն վերադարձան հաշմանդամ դարձած, խեղանդամված, վիրավորված:

Վիրավորված տուն վերադարձան Ուսուբե Աթերը, Մշիրե Խուդեդան, Ալիկ Թամոյանը և շատ ու շատ ուրիշներ: Ասյա Խատոյանը տուն վերադարձավ մի ոտքը ռաղմաճակատում կորցրած: Մի ձեռքը վիրավորված ռազմաճակատից տուն վերադարձավ նաև Թոսուն Ասոյանը: Ո՞րը թվել:

Դեռևս 1992 թվականի հոկտեմբերի 24-ին եզդիների ազգային միության նախագահությունը սահմանել էր «Եզդի ժողովրդի ազգային հերոս» պատվավոր կոչումը: Մինչև 2000 թվականը այդ կոչմանն արժանացավ եզդիների ազգային միության նախագահ Ազիզ Թամոյանը: Հետագայում այդ պատվավոր կոչմանն արժանացան նաև

Հայաստանի ազգային ռադիոյով եզդիների համար տրվող հաղորդումների գլխավոր խմբագիր Հասան Թամոյանը, Արցախյան ազատամարտի ամենաակտիվ մասնակիցներից մեկը՝ Մշիրե Խուդեդան (Մշիր Նադոյանը), ինչպես նաև Սուտո բեգ Ամարյանը:

Մշիր Նադոյանին Ազգային հերոսի կոչում շնորհելու մասին որոշումը սիրով ընդունվեց բոլորի կողմից: Որոշման մեջ ասված էր. «Հաշվի առնելով եզդի ժողովրդի արժանավոր զավակ Մշիր Խուդոյի Նադոյանի հայրենանվեր աշխատանքը, այն մեծ ծառայությունը, որ նա ցուցաբերել է Արցախյան հերոսամարտում, նրան շնորհել Ազգային հերոսի պատվավոր կոչում և պարգևատրել «Ոսկե մեդալով»: Մշիր Նադոյանն, իրոք, ժողովրդի հպարտությունն է, որի մասին լեգենդներ են հյուսվել, որը բոլորի համար իր սխրանքներով օրինակ է դարձել:

Մշիր Նադոյանը ծնվել է Երևանում 1958 թվականին: Ունի միջնակարգ մասնագիտական կրթություն: Ամուսնացած է, ունի վեց երեխա: 1989 թվականին Մշիրն արդեն Հայաստանի սահմանամերձ շրջանների ինքնապաշտպանական ջոկատների կազմում էր: Նա փառքով պսակվեց Նոյեմբերյանի, Տավուշի, Իջևանի, Երասխավանի, Լեռնային Ղարաբաղի Գետաշենի և Շահումյանի բնակչության գաղթի անվտանգությունն ապահովելու և պարտիզանական կռիվներում, այնուհետև Մալիբեյլիի, Խոջալուի պաշտպանական ու նաև ազատագրման մարտերում: Ու այս մեծ երթուղում բոլորը սիրով ու ակնածանքով էին արտասանում իրենց հավատարիմ ու քաջ եզդի ընկերոջ անունը: Եվ պատահական չէ, որ հայոց բանակի հրամանատարությունը ի դեմս Մշիր Նադոյանի, գիտեր, որ եզդի ժողովուրդն իր կողքին է, իր մարտական զինակիցն է:

Անգնահատելի են Հասան Թամոյանի ծառայություններն իր ժողովրդին: Մի կողմ թողնելով նրա մյուս ծառայությունները, հիշենք, թե երկար ու ծիգ տարիների ընթացքում Հասան Թամոյանը ինչպես էր իր մասնակցությունը բերում շարժմանը, հավաքներում և մարտերում իր հաղորդումներով ինչպես էր ոգևորում եզդի ժողովրդին, ինչպես էր ներկայացնում եզդի քաջորդիների սխրանքները, ինչպիսի ցավով էր պատմում ընկած ռազմիկների մասին:

Անմոռաց են նաև Սուտո բեգ Ֆայզոյի Ամարյանի ծառայությունները, որոնց համար նա արժանացավ եզդի ժողովրդի ազգային հերոսի կոչմանը:

Սուտո բեգ Ամարյանը ծնվել է 1959 թվականին Արագածոտնի մարզի Շամիրամ գյուղում: 1988 թվականի ավերիչ երկրաշարժը խորապես ցնցեց նաև Սուտո բեգ Ամարյանին: Նա կազմակերպեց հանգանակություններ և իր հայրենակիցներից հավաքված գումարներով, իր անձնական միջոցներով մեծ օգնություն ցույց տվեց

աղետյալներին, հատկապես Գյումրիի և Սպիտակի բնակիչներին, ակտիվորեն մասնակցեց աղետի գոտու հետևանքների վերացման գործին:

Արցախյան հերոսամարտի օրերին Սուտո բեգ Ամարյանը կազմակերպեց կամավորական ջոկատներ, որոնք մեկնեցին Արցախ և աչքի ընկան իրենց խիզախությամբ ու արիությամբ: Նրանց թվում էին Զադա Թամոյանը, Ռաշիդ Խուդոյանը, Ամո Ամարյանը, Տոսուն Ամարյանը, Մրազ Ամարյանը, Սիաբանդ Բրոյանը, Աֆո և Մրազ Հաբոյանները և ուրիշներ: Սուտո բեգ Ամարյանը պարբերաբար այցելում էր Արցախ, բարձրացնում ազատամարտիկների մարտական ոգին:

Եզդիների ազգային միության նախագահությունը հաշվի առնելով Սուտո բեգ Ամարյանի մեծ ավանդը Արցախյան հերոսամարտի հաղթական ավարտի գործում, նշանակալից ավանդ երկրաշարժի հետևանքների վերացման աշխատանքներում, նրա մեծ ծառայությունները եզդի ժողովրդին, նրան շնորհել է Եզդի ժողովրդի ազգային հերոսի պատվավոր կոչում:

Անցնում են օրե՜ր, ամիսնե՜ր, տարինե՜ր...

Սակայն չի խամրում հերոսների փառքը:

Այս գրքույկի յուրաքանչյուր էջից մեր առջև հառնում են զոհված ջահելների կերպարները, միշտ ուրախ, ժպտուն, միշտ կենդանի:

Այդպիսին էլ կմնան նրանք բոլոր դարերում, բոլոր ժամանակներում:

Ազիզ Թամոյան
Աշխարհի և Հայաստանի եզդիների ազգային միության պրեզիդենտ,
եզդի ժողովրդի ազգային հերոս,
Արցախյան ազատամարտի եզդիների ղեկավար և առաջնորդ



ՍԱԴՈՅԱՆ ԱԳԻՏ Ա'ԳԻՏԵ Ա'ՄԱՐ (1957-1991)

Ագիտ Սադոյանը կարծես ծնվել էր ֆիդայի դառնալու համար: Նրա արտաքինը, հպարտ կեցվածքը, հաղթելու հավատը ոգևորում էին բոլորին, մղում հաղթանակի: Նա Արմավիրի մարզի Երասխահուն գյուղում 1957 թվականին ծնված Ագիտ Սադոյանը, հանրապետության առաջին ֆիդայիներից էր, որը կամավոր մեկնեց Արցախ, մասնակցեց բազմաթիվ մարտերի, դարձավ մարտական ընկերների, բոլորի սիրելին: Նրա համար անընդունելի էր նահանջը, միշտ ձգտում էր հաղթանակի, պատրաստ էր հանուն այդ հաղթանակի զոհաբերել ամենաթանկը՝ կյանքը:

Ճակատամարտերում հյուծված, առողջությունը կորցրած, վերադառնալով տուն, իր ընտանիքի գիրկը, նա վախճանվեց անժամանակ, 1991 թվականի մայիսի 31-ին, թաղվեց Արմավիրի մարզի Երասխահուն գյուղում:

Ագիտ Սադոյանն ամուսնացած էր, ունի չորս երեխա: Նրանք սրբությամբ են պահում իրենց հերոս հայրիկի հիշատակը:



ՇԱՌՈՅԱՆ ԻՍՄԱՅԻԼ ИСОЕ НАДЬР (1965-1991)

Երևանն է Իսմայիլ Շառոյանի ծննդավայրը, որի համար էլ ելավ մարտի, դարձավ եզդի առաջին ֆիդայիներից, Արցախյան հերոսական գոյամարտի առաջամարտիկներից մեկը: Հպարտ կեցվածքով եզդի երիտասարդը շուտով նվաճեց բոլորի սերն ու համակրանքը, մասնակցեց Գորիսի, Վայքի, Իջևանի, Արարատի և այլ տարածքների սահմանների պաշտպանությանը, և՛ հարձակվեց, և՛ պաշտպանվեց, դարձավ թշնամու սարսափը: Նա ուներ իր երազները, իր աշխարհը, սակայն նրան և իր մտերական ընկերներին միավորում էր մի ընդհանուր գաղափար՝ ազատագրված տեսնել Արցախ աշխարհը, միավորված՝ հայրենիքին:

Սակայն Իսմայիլ Շառոյանի երազանքները կիսատ մնացին: Նա զոհվեց 1991 թվականի հոկտեմբերի 27-ին: Սգո հանդիսավոր արարողությամբ նրա դին հողին հանձնվեց Եռաբլուրում: Նրա ամբողջ կյանքը ուսանելի դաս է բոլոր հետնորդների համար:

Իսմայիլ Շառոյանն ամուսնացած էր, ունի երկու երեխա:



ՋԵՅԴԻՆՅԱՆ ԹԵՄՈՒՐ Տ'ԵՄՈՒՐԵ ԱՖԱՆԴԻ (1955-1992)

Թեմուր Ջեյդինյանի լուսանկարը՝ ավտոմատը կրծքին սեղմած, խրոխտ, վճռական հայացքով և պատրաստ գրոհելու թշնամու դիրքերի վրա, կա եզդի շատ ընտանիքներում: Կարծես Թեմուրն այն օջախի որդին է, ուր նրա լուսանկարը կա, կարծես նա հենց այդ օջախի հպարտությունն է, որ բարձր է պահում եզդի ժողովրդի պատիվը՝ մյուս բոլոր ժողովուրդների առջև: «Այսպես կպայքարենք մեր կյանքի, մեր ազատության, մեր հայրենիքի համար», - կարծես պատգամում էր Թեմուր Ջեյդինյանը: Նրա կյանքը կարճատև եղավ. ծնվեց 1955-ին, կյանքն ավարտեց 1992-ին. եղավ իր ծննդավայրի՝ Երևանի նվիրված քաղաքացին, եղավ Արցախի Հադրութի շրջանի Աղբուլաղ և Խրմնջուղ գյուղերի պաշտպանը: Եվ այն բլուրը, ուր ընկավ եզդի ժողովրդի զավակը 1992 թվականի հունվարի 30-ին, ընկերները կոչեցին Թեմուրի բլուր:

Հերոսի դին բերվեց հայրենիք: Սգո հանդիսավոր արարողությամբ այնտեղ, ուր հողին էին հանձնվում Արցախյան ազատամարտում զոհված հերոսները, Եռաբլուրում, իր վերջին հանգրվանը գտավ նաև Թեմուր Ջեյդինյանը:



ՀԱՋՈՅԱՆ ԳԱԳԻԿ
ГАГИКЕ УНЬС
(1972-1992)

Քսան տարեկան էր նա, նոր էր կյանք մտնում և որքա՜ն-որքա՜ն երազանքներ ուներ, որ այդպես էլ չիրականացան, մնացին որպես երազանք: Նա իր կարճատև կյանքը նվիրաբերեց Արցախի ազատագրմանը, և ամբողջ հոգով ձգտում էր դեպի ռազմաճակատ, ուր կռվում էին իր ընկերները: Եվ նա հասավ իր նպատակին. 1992 թվականի մայիսի 5-ին Գագիկ Հաջոյանը զորակոչվեց հայոց բանակ:

... Հեռվում մնացին Արտաշատի շրջանի Ջրաշեն գյուղի հարազատ վայրերը, հարազատները, բարեկամները...

Ջրաշենում է ծնվել Գագիկը, 1972 թվականին, սովորել է գյուղի դպրոցում, աչքի է ընկել ջանասիրությամբ, աշխատասիրությամբ, նվիրվածությամբ:

Երկար չտևեց Գագիկ Հաջոյանի կյանքը: Թշնամու գնդակը խոցեց նրան 1992 թվականի օգոստոսի 7-ին՝ Արծվաշենի համար մղված մարտի ժամանակ:

Եզդի ժողովրդի զավակը թաղվեց Եռաբլուրում, հերոսների կողքին, հերոսին վայել արարողությամբ:



ԲԱՔԻՐՅԱՆ ՄՈՒՍԱ
МУСАЕ МӘ'МУД
(1973-1992)

Արագածի լանջին, երբ բացվում էր առավոտը, Մուսան, որին բոլորը Ռազմիկ էին կոչում, վրանի փեշը մի կողմ էր քաշում, նայում երկնքին ու սարերի անմեղ քնքշանքին, հետո վազում էր հոր մոտ, իր հետ տանելով խրտնած գառներին, ինքն էլ գնում, խառնվում էր զմրուխտե բացատների արքայական գեղեցկությանը:

Մուսա Բաքիրյանը միշտ այսպես էր հիշում իր մանկությունը, որն անցավ Արագածի լանջերին, Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղում, ուր ծնվել էր նա՝ 1973 թվականի նոյեմբերի 22-ին: Սովորել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում: Հետո զորակոչվեց հայոց բանակ, կռվեց ջահելի խիզախությամբ, տեսավ կռվի ավերածությունները, զգաց ռազմաճակատի շունչը: Բայց, ավա՜ղ, քսան տարին չլրացրած, Մուսա Բաքիրյանն ընկավ Լաչինում, փառքով պսակելով իրեն:

Մուսա Բաքիրյանը թաղվեց իր հայրենի՝ Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղի եզդիական գերեզմանոցում:



ՌԱՍՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ
САМВЕЛЕ МОСКОВ
(1973-1992)

Լաչինի համար մղված մարտերի ժամանակ անհայտ կորել է նա՝ 19-ամյա այդ պատանին, որի սիրտը լի էր պայծառ երազանքներով, կենսասեր էր ու կենսախինդ, որ զորակոչվելով հայոց բանակ, ռազմաճակատ էր մեկնել կռվելու, հաղթելու և Արցախն ազատագրված տեսնելու անմար հավատով:

Բայց ճակատագիրը դաժան գտնվեց Սամվել Ռասոյանի հանդեպ, նա չուներցավ իր գերեզմանը, ու մնաց այդպես՝ անմահ, ինչպես իր գործը:

Մեծ կենսագրություն չուներցավ Սամվելը: Ծնվել է Աշտարակի շրջանում՝ Արագածոտն գյուղում, սովորել է տեղի դպրոցում, 1992 թվականի գարնանը զորակոչվել է բանակ, մեկնել Արցախ, մասնակցել մի քանի մարտերի, աչքի ընկել պատանեկան խիզախությամբ: Բայց Լաչինի համար մղված թեժ մարտերից մեկը վերջինը եղավ նրա համար:

Ու՞ր է Սամվելը, ոչ ոք չգիտի, ու մնում է նա այդպես անգերեզման ու ... անմահ:



ՔԱԼԱՇՅԱՆ ԳԱԳԻԿ ԳԱԳԻԿԵ ՇԱՐԻՖ (1973-1993)

Իր հասակակիցների նման Գագիկ Քալաշյանն էլ լի էր եռանդով, ավյունով, երազանքներով: Նա սիրում էր կյանքը և պատրաստվում էր մեծ թռիչքների: Նա սիրում էր աշխարհը, կյանքը, ընկերներին, հարազատներին, իր ժողովրդին, որոնց համար էլ ձեռքը զենք առավ, կռվեց հանուն արդարության, հանուն հաղթանակի:

Գագիկ Քալաշյանը ծնվել է 1973 թվականին Մասիսի շրջանի Արգավանդ գյուղում, հետագայում ընտանիքով տեղափոխվել են էջմիածին, որտեղից էլ զորակոչվել է բանակ, մեկնել Արցախ:

Մարտական երկար ուղի չի անցել Գագիկ Քալաշյանը, բայց կռվել է երիտասարդներին հատուկ կրքոտությամբ, հաղթելու հավատով: Սակայն Մարտակերտ տանող ճանապարհը հետախուզելիս, հրամանատարության առաջադրանքը կատարելիս, 1993 թվականի մայիսի 6-ին զոհվեց՝ փառքով պսակելով իր անունը: Նրա աճյունն ամփոփված է էջմիածնի ֆիդայական գերեզմանոցում:



ԱՎԴԱԼՅԱՆ ՕՄԱՐ ОМƏРЕ ХЬДЬР (1960-1993)

Դժվար է պատկերացնել, որ այլևս մեզ հետ չէ Օմար Ավդալյանը, այդ կենսուրախ, մշտաժպիտ, պատրաստակամ ընկերը, որ անցել էր պատերազմի բովով, մասնակցել էր Արարատի, Նոյեմբերյանի, Իջևանի շրջանների սահմանների պաշտպանությանը, ակտիվորեն նետվել կռիվների թեժ կետերը, իր խիզախությամբ և արիությամբ ոգևորել մարտական ընկերներին:

Ե՛վ Կոտայքի մարզի Զովունի գյուղում, ուր ծնվել է Օմար Ավդալյանը, և՛ սահմանամերձ շրջաններում, ուր մարտնչել է նա, միշտ բարի խոսքով են հիշում Օմար Ավդալյանին: Թեև թշնամու գնդակը չխոցեց նրան, սակայն ռազմաճակատից տուն վերադարձավ առողջությունը կորցրած: Եվ զինվորական հիվանդանոցում էլ կնքեց իր մահկանացուն՝ 1993 թվականի օգոստոսի 3-ին: Նրա աճյունը ամփոփվեց հայրենի գյուղի գերեզմանոցում:



ՀԱՋՈՅԱՆ ԹՈՌՈՒՆ Տ'ՕՐ'ԻՆԵ Ə'ԼԻ (1958-1994)

Թոռուն Հաջոյանին շատերն էին ճանաչում որպես հրաշալի ընկեր, լավ մարդ, իսկական հայրենասեր: Այդպիսին էր նա իր ապրած բոլոր տարիներին՝ մանկության օրերից մինչև իր հերոսական մահը:

Արտաշատի շրջանի Ջրաշեն գյուղում է ծնվել Թոռուն Հաջոյանը՝ 1958 թվականին:

Սովորել է հայրենի գյուղի դպրոցում, աչքի է ընկել իր պարտաճանաչությամբ, կարգապահությամբ: Նրան սիրել են ընկերները, ուսուցիչները, համագյուղացիները: Արցախյան շարժման առաջին իսկ օրերից եղել է իր հայ ընկերների կողքին և սկսած 1991 թվականից՝ մասնակցել Արցախյան հերոսամարտերին, ՀՀ սահմանների պաշտպանությանը, հայոց հողերի ազատագրությանը: Այդպիսի մարտերից մեկի ժամանակ էլ, 1994 թվականին, զոհվեց նա, խոր վիշտ պատճառելով բոլորին:

Թոռուն Հաջոյանն իր հանգիստն է գտել Մասիսի շրջանի Մարմարաշենի գերեզմանատանը:

Նա ամուսնացած էր, ունի երեք երեխա:



ՀՈՍԵՅԱՆ ՀԱՍԱՆ
h'ƏCƏHE
Cəh'ИД
(1973-1994)

Երազկոտ ու աշխույժ պատանի էր նա` Հասան Հոսեյանը: Իր հասակակիցների նման նա պայծառ երազներ ուներ և գալիքի պայծառ ճանապարհներ: Բայց Արցախյան շարժումը խորապես հուզեց նաև եզդի երիտասարդին: Էջմիածնի շրջանի Արշալույս գյուղում 1973 թվականին ծնված երիտասարդը, որ հասակ էր առել Արարատի հայացքի ներքո, մի՞թե կարող էր անտարբեր լինել Արցախի բախտի նկատմամբ: Եվ, ահա, 20 տարին դեռ նոր բոլորած տղան, հավատարիմ իր պապերի սուրբ պատգամներին, գնաց կռիվ` կանգնելու հայ եղբայրների կողքին, կռվելու հանուն Արցախի ազատության: Հերոսը ծնվում է ոչ թե պատահաբար, այլ նվիրյալ հոգով, խիզախությամբ: 1994 թվականի հունվարի 27-ին, Ֆիզուլու շրջանում մղվող մարտերի ժամանակ, թշնամու երկու տանկ շարքից հանելուց հետո, զոհվեց եզդի քաջորդին` Հասան Հոսեյանը, բարձր պահելով իր ժողովրդի պատիվը:



ԳՈՒԼՈՅԱՆ ԲԸՐՈ
БЬРОЕ К'ӘРӘМ
(1955-1994)

Եզդի ազատամարտիկներից շատերը տուն չվերադարձան, չտեսան Արցախյան պայքարի հաղթական ավարտը: Նրանցից է Բըրո Գուլոյանը, որ հինգ տարի շարունակ մասնակիցն էր Արցախյան ճակատամարտերի, որ կոփվել էր կռիվներում, ու թվում էր, թե նրան այլևս մահ չկա...

Կռվել է նա Արցախ աշխարհի ազատության համար, կատարելով նախնիների պատգամը՝ միշտ լինել հայ եղբայրների կողքին, միասին ապրել ուրախությունն ու տխրությունը:

Էջմիածնի շրջանի Մեծամոր ավանում 1955 թվականին ծնված Բըրո Գուլոյանը, որ ապրեց եզդի երեխայի ուրախություններով ու չարաճճիություններով, որը հետագայում տեղափոխվեց Երևան, սովորեց հանրակրթական դպրոցում, վայելեց ընկերների ու ուսուցիչների համակրանքը, կամավոր մեկնեց Արցախ, մասնակցեց մի քանի ճակատամարտերի, պայքարեց հայրենի հողի համար, 1994 թվականի ապրիլի 20-ին՝ Հորադիզի մարտերի ժամանակ կորավ անհայտ ու... անմահացավ:



ՉԱՏՈՅԱՆ ԲԱՐՋԱՆԻ
БАРЗАНИЕ СЭИ'ИД
(1972-1994)

Տաշիրի զավակ էր նա, ուր և ծնվել է 1972 թվականին: Դպրոցում սովորելիս աչքի է ընկել իր ուսման առաջադիմությամբ, կարգապահությամբ, պարտաճանաչությամբ: Ընկերները ակնածում էին նրանից, հաշվի էին առնում նրա կարծիքը, խորհուրդներ էին հարցնում նրանից: Դպրոցական պատանին ընթերցասեր էր, խորաթափանց, գիտեր, թե ինչ է Արցախը Հայաստանի համար և աներկյուղ նետվեց պայքարի՝ կատարելով իր պարտքը Հայաստանի հանդեպ: Եվ Արցախ աշխարհը ամենամեծ հայրենասիրության դպրոցը եղավ նրա համար, որին էլ զոհաբերեց իր ջահել կյանքը, հերոսության օրինակ դառնալով եզդի ջահելների համար:

Բարզանի Չատոյանը զոհվեց 1994 թվականի ապրիլին: Հերոս զինվորն իր վերջին հանգրվանը գտավ հայրենի Տաշիրում:

EZDIKI.COM



ԽՈՒԴՈՅԱՆ ԲԱՐՋԱՆԻ БАРЗАНИЕ ХʼӘСӘН (1974-1994)

Բարզանի Խուդոյանին Արմավիրի մարզի Արմավիր գյուղում հիշում են այնպես, ինչպես հրաժեշտի օրը, երբ նա ուրախ ու զվարթ, հպարտ այն գիտակցությամբ, որ մեկնում է հայրենի հողը պաշտպանելու, հավատում էր, որ կվերադառնա հաղթանակով: Նա սիրված էր գյուղի հասարակայնության կողմից, որովհետև բարի և ընկերասեր էր, ուներ զգայուն հոգի, պատրաստ էր օգնության հասնել բոլորին:

Բարզանին ծնվել է 1974 թվականի հոկտեմբերի 14-ին, հաջողությամբ ավարտել հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը և երազում էր բարձրագույն կրթության, կյանքի նոր հորիզոնների մասին:

Բայց Արցախը կանչում էր, ու նա 1992-ի մայիսին զորակոչվեց բանակ: Առաջին ամիսներին մասնակցեց Կապանի պաշտպանական մարտերին, հետո կամավորների խմբի հետ հասավ Հորադիզ, մասնակցեց մի շարք մարտերի ու իր մահկանացուն կնքեց արցախյան հողում, անմահացավ «Կարմրաքար» ջոկատի զոհված մարտիկների կազմում:

Բարզանի Խուդոյանը թաղվեց հայրենի գյուղում՝ Արմավիրի մարզի Արմավիրի եզդիական գերեզմանոցում:

Բարզանին ամուսնացած էր, ունի երկու դուստր:



КОТИЕВ ЛЕОНИД ЛЕОНИДЕ МИХАЙИЛ (1975-1994)

Ընդամենը տասնիներ գարուն ապրեց նա, ընդամենն անցավ կյանքի մի կարճ ճանապարհ, բայց այդ ճանապարհը նրան տարավ դեպի անմահություն: Նա չհասցրեց նույնիսկ ամուսնանալ, զավակներ ու հետնորդներ ունենալ, որոնք կարող էին հպարտությամբ արտասանել Արցախի համար իր կյանքը զոհաբերած Լեոնիդ Կոտիևի անունը:

Ծնվել է 1975 թվականին Տաշիրում, սովորել է տեղի դպրոցում, աչքի է ընկել ջանասիրությամբ: Նա հաստատակամորեն նետվեց մարտի, մեկնեց Արցախ, կռվեց մի քանի ճակատներում: Ու ինչպես իր բոլոր հասակակաիցները, ինչպես հայ մարտիկները, թեև շատ կարճ կյանք ունեցավ, բայց ինքն էլ հերոսացավ ու անմահացավ:

Լեոնիդ Կոտիևը անհետ կորավ Հորադիզի մարտերի ժամանակ:

Լեոնիդ Կոտիև անուն - ազգանունը, սակայն, անհայտ չէ:



ՄԻՐՋՈՅԱՆ ՍԱՀԻԴ Сəհ'ИДЕ МƏЩИТ (1972-1994)

Դժվար է բաժանվել մանկության ընկերներից, բարեկամներից, ծնողներից ու հարազատներից, բայց քաղաքացիական պարտքն ստիպում է գնալ նաև այդ քայլին, մանավանդ, որ ընկերներն այնտեղ են՝ ռազմաճակատում, ուր կռվում են Արցախի, հայոց հողի համար, հող, որ դարձել է նաև եզդի ժողովրդի նոր հայրենիքը:

Եվ Սահիդը, որ ծնվել էր 1972 թվականին Արտաշատի շրջանի Բաղրամյան գյուղում, հետո ընտանիքով տեղափոխվել Բաղրամյանի շրջան, 1993 թվականին զորակոչվեց հայոց բանակ: Շուտով նա վաստակեց խիզախ զինվորի համբավ, մասնակցեց մի շարք մարտերի և հաղթանակի հավատով էլ ընկավ մարտի դաշտում, Քելբաջարում՝ 1994 թվականի ապրիլի 24-ին:

Սահիդ Միրզոյանը իր վերջնական հանգիստը գտավ հայրենի գյուղում՝ էջմիածնի շրջանի Ֆերիկ գյուղի եզդիական գերեզմանոցում:



ՍԱԴՈՅԱՆ ՅԱՇԱ ՅԱՇԱԵ ՇԻՐՇԱ (1968-1994)

Անցել են տարիներ, սակայն Յաշա Սադոյանի հարազատների սիրտը կսկծում է կորստի ցավից, երբ հիշում են ժպտերես, կենսախինդ Յաշային, որը բանաստեղծական երկտողով միշտ ուրախացնում էր բոլորին .

- Երբ կտեսնի Յաշային,
Պո՞ւկ, կփախչի թշնամին...

Եվ, իրոք, կամավոր մեկնելով Արցախ, մասնակցելով մի շարք մարտերի, Յաշան և նրա ընկերները փախուստի էին մատնում թշնամուն, հաղթանակի բերկրանք ապրելով ամեն մարտից հետո: Բայց անողոք ճակատագիրը չխնայեց 1968 թվականին ծնված երիտասարդին: 1994 թվականի մայիսի 6-ին թշնամին Աղդամից հարձակում էր սկսել: Անհավասար էին ուժերը: Թշնամու կողմից գրոհում էին տանկեր ու զրահամեքենաներ, որոնց դեմ կռվում էին մի բուռ խիզախներ: Անհավասար կռվում ընկան քաջերից շատերը, նրանց թվում էր նաև Յաշա Սադոյանը:

Յաշա Սադոյանի դին տեղափոխվեց հայրենի՝ Թալինի շրջանի Արտենի գյուղ, որտեղ էլ եզդիական գերեզմանոցում հողին հանձնվեց:

Յաշան ամուսնացած էր, ունի մեկ երեխա:



ՍՈՒԼԹԱՆՅԱՆ ՂՈՒԼԻԽԱՆ
ҚӦЛИХАНЕ Р'ӘЩО
(1956-1994)

«Կամավոր մեկնեց ռազմաճակատ». դժվար չէ պատկերացնել, թե ինչ է նշանակում՝ կամավոր մեկնել ռազմաճակատ: Դա նշանակում է՝ ընդառաջ գնալ մահին, իմանալ, որ թշնամու արկերն են սուլելու քո գլխավերևում, մտածել, որ դրանք կարող են պայթել մի քանի մետրի վրա, որ կյանքը ամեն վայրկյան վտանգի մեջ է...

Բայց Ղուլիխանը չսասանվեց, կամավոր մեկնեց Արցախ: Էջմիածնի շրջանի Խաթունարխ գյուղի բնակիչները, աշխատանքային ընկերները հավատում էին, որ նա հաղթանակով կվերադառնա: Չէ՞ որ Ղուլիխանին բոլորը գիտեին որպես քաջ, արիասիրտ, անվախ համագյուղացու: Մի քանի հաղթական մարտերի մասնակցելով, Ղուլիխանին թվաց, որ թշնամու գնդակն այլևս իրեն չի կարող խոցել: Բայց... 1994 թվականի մայիսին Ղուլիխան Սուլթանյանը զոհվեց, բոլորի հիշողության մեջ մնալով որպես քաջ ու անվեհեր գինվոր:

Հերոսի դին հողին հանձնվեց հայրենի գյուղի՝ Խաթունարխի եզդիական գերեզմանոցում:

Ղուլիխան Սուլթանյանն ամուսնացած էր, ուներ երեք երեխա:



ՀԱՋՈՅԱՆ ՆՈՐԻԿ
НОРИКЕ h'ƏCƏH
(1974-1994)

Նորիկ Հաջոյանը ծնվել է Արտաշատի շրջանի Մրգանուշ գյուղում՝ 1974 թվականին: Ոչ ոք չէր պատկերացնի, որ այդ փոքրիկ Նորիկը, որ խաղում էր բակում, հրապուրվում ֆուտբոլով, չարաճճիություններ անում, կարող է զենք վերցնել, կրակել թշնամու վրա, նետվել գրոհի, զոհվելով՝ անմահանալ:

Բայց այդպիսին էր նա՝ Նորիկ Հաջոյանը, որ ծնվել էր 1974 թվականին Արտաշատի շրջանի Մրգանուշ գյուղում, սովորել տեղի դպրոցում, իր աշխատասիրությամբ, ջանասիրությամբ, ընկերների, մեծերի ու փոքրերի նկատմամբ ունեցած սիրալիր վերաբերմունքով արժանացել բոլորի սիրուն ու համակրանքին:

1998 թվականին նա զորակոչվեց բանակ, մասնակցեց պաշտպանական մի շարք մարտերի և ... զոհվեց 1994 թվականի հուլիսի 21-ին՝ Նոյեմբերյան շրջանի Կոթի գյուղի մոտ:



ՀԱՄԶՈՅԱՆ ԹՈՌՈՒՆ Տ'ՕՐ'ԻՆԵ ՄՅՇԻՏ (1975-1994)

«Բոլորը կռվում են քաջի նման»,- գրում էր Թոռունը ընկերներին, համեստորեն չհիշելով իրեն. բայց չէ՞ որ մյուսների նման այդ 19-ամյա պատանին նույնպես կռվում էր քաջաբար, չէր վախենում թշնամու արկ ու գնդակից: Երևանցի տղան, որ զորակոչվել էր բանակ 1993 թվականին, շուտով դարձավ բոլորի սիրելին, եզդիների հպարտությունը:

Մինչև նահատակվելը, գենքն անբաժան էր Թոռուն Հաջոյանից, իսկ հաղթանակի հավատը ամուր էր նրա սրտում: Մասնակցել է Արցախյան մի շարք մարտերի: 1994 թվականի ապրիլի 15-ին Հորադիզի համար մղվող մարտերից մեկում վիրավորվել է, տեղափոխվել հոսպիտալ բուժվելու: Եզդի քաջորդու սիրտը դադարեց բաբախելուց 1994 թվականի դեկտեմբերին:

Թոռուն Համզոյանը թաղված է Ներքին Չարբախի գերեզմանատանը:



ՄՂՈՅԱՆ ԱԶԻԶ Ə'ЗИЗЕ ПЬРИСТАВ (1944-1994)

Ազիզ Մհոյանի մասին լեգենդներ հյուսվեցին: 50-ամյա ազատամարտիկը կռվում էր ջահելի պես, ահ ու սարսափ տարածում թշնամու շարքերում: Կարծես նա վրեժ էր լուծում այն բոլոր զոհերի համար, որ ունեցել էին իր նախնիները պատմության քառուղիներում:

Ազիզ Մհոյանը ծնվել է 1944 թվականին Ալագյազում, մեծացել հայրենի լեռնալանջերի վեհությունը վայելելով, արժանանալով համագյուղացիների հարգանքին:

Արցախյան ազատամարտերի օրերին նա կանգնեց հայ եղբայրների կողքին, մասնակցեց մի շարք մարտերի, վաստակեց խիզախ զինվորի համբավ: Սակայն թշնամու գնդակը 1994 թվականին խոցեց նաև Ազիզ Մհոյանին:

Ազիզ Մհոյանին փառքով ու սրտի ցավով հողին հանձնեցին հայրենի Ալագյազ գյուղում:



ՈՒՍՈՒԲՅԱՆ ԱԼԻԿ
АЛИКЕ Հ'ƏՍƏՀ
(1976-1995)

Նվիրյալ ազատամարտիկն ապրեց ընդամենը 19 տարի, բայց հավերժացավ Արցախյան գոյամարտում:

19 տարի... Դա մի ակնթարթ է մարդու, այն էլ՝ երիտասարդ մարդու կենսագրության մեջ: Բայց այդ ակնթարթը անմահության խորհրդանիշն է եզդի երիտասարդի համար, որը թողած տուն ու տեղ, հարազատներ, բարեկամներ ու ընկերներ, հայրենականչով ելավ մարտի, կրծքով պաշտպանեց Կրասնոսելսկի շրջանի սահմանները: Նա վստահ էր, որ Սևանի ափին պաշտպանում է իր հայրենի Արմավիրի մարզի Ջրաշեն գյուղի մատույցներն ու արոտավայրերը, հայրական տունը, իր բոլոր բարեկամներին: Եվ 1994 թվականի նոյեմբերից մինչև 1995 թվականի փետրվարի 20-ը, երբ Ալիկ Ուսուբյանը մարտադաշտում էր, բարձր պահեց եզդի ժողովրդի պատիվը: Ու թեև զոհվեց, բայց նրա անունը մնաց հայրենի գյուղի բնակիչների, ընկերների ու հարազատների շուրթերին...

Ալիկ Ուսուբյանը թաղվեց Արմավիրի եզդիական գերեզմանոցում:



ՄՍՏՈՅԱՆ ՍԻԱԲԱՆԴ СИАБӘНДЕ Ә’ЩӘМ (1960-1995)

Հայրենի՝ էջմիածնի շրջանի Արշալույս գյուղում սիրով ու նաև ցավով են հիշում Սիաբանդ Մստոյանին: Նա ծնվել է այս գյուղում 1960 թվականին, սովորել է հայրենի գյուղի դպրոցում, հասակ է առել այստեղ, նվաճել սեր ու հարգանք, վայելել մեծ հեղինակություն: Արցախյան շարժման առաջին իսկ օրից եղել է բոլոր իրադարձությունների մասնակիցը, բռունցք է բարձրացրել ի սարսափ թշնամիների: Եվ սրտի կանչով էլ Սիաբանդը կամավոր մեկնեց Արցախ: Նա զգում էր, որ եզդի ժողովրդի զավակը պետք է լինի հայ եղբայրների կողքին: Մարտակերտի պաշտպանները լավ են հիշում իրենց մարտական ընկերոջը, որ չվախենալով թշնամու գնդակից, պաշտպանում էր հայրենի հողը: Բայց 1995 թվականի փետրվարի 21-ը ճակատագրական եղավ Սիաբանդի համար: Այդ օրը նա զոհվեց Մարտակերտի շրջանում... և անմահացավ:

Նրա անմահության հուշարձանն է բարձրանում հայրենի էջմիածնի շրջանի Ակնալիճի եզդիական գերեզմանոցում, ուր ամփոփված է նրա աճյունը:

Սիաբանդ Մստոյանն ամուսնացած էր: Ունի երեք երեխա:



ՀԱՄԶՈՅԱՆ ՅՈՒՐԱ ЙУРАЕ ФАРЬЗ (1976-1995)

Երևանի N2 պրոֆտեխուսումնարանը, ուր սովորել է Յուրա Համզոյանը, միշտ կմնա եզդիների հիշողության մեջ որպես արիության դպրոց: Չ՞է որ այստեղ էր ձևավորվել արցախյան հերոսամարտերի մասնակիցը, եզդի ժողովրդի արժանավոր զավակը: Այստեղ սիրում էին նրան, ճանաչում էին որպես ձեռներեց, պատրաստակամ ընկեր, որին կարելի էր դիմել դժվար պահերին ու համոզված լինել, որ նա անպայման օգնության ձեռք կմեկնի:

Յուրան, 1976 թվականին Երևանում ծնված այդ երիտասարդը, կարճ ժամանակում ձեռք բերեց աշակերտական և ուսուցչական կոլեկտիվների վստահությունն ու սերը: Եվ ոչ ոք չզարմացավ, երբ լսեցին, որ իրենց Յուրան մասնակցում է Մեղրու շրջանի սահմանների պաշտպանությանը: Իսկ հետո ստացվեց ծանր բոթը. Յուրան զոհվել է Ջեբրայիլի մոտ 1995 թվականի մարտի 28-ին: Խոր կսկիծ ապրեցին բոլորը, բայց մխիթարությունն այն էր, որ Յուրա Համզոյանն այդ օրից սկսել է իր անմահության ուղին:

Այդ են վկայում Չարբախի եզդիական գերեզմանոցում նրա սրբացած հողաթումբը և անմահության հուշարձանը:



ԹԱՄՈՅԱՆ ՌԱԶՄԻԿ Ր'ԱԶՄԻԿԵ ԻՇԽԱՆ (1976-1995)

Անունը Ռազմիկ էր, և նա դարձավ ռազմիկն այն մեծ հերոսամարտի, որ մղում էր Արցախի ժողովուրդը հանուն իր հողի, հանուն պատմական արդարության:

Ռազմիկ Թամոյանի կենսագրությունն էլ, ինչպես իր հասակակից ազատամարտիկներից շատերինը, կարճ տևեց: Ծնվել է Բաղրամյանի շրջանի Շենիկ գյուղում, սովորել հայրենի գյուղի դպրոցում ու հետո կամավոր մեկնել Արցախ՝ իր կարճ կենսագրությունը հարստացնելով հերոսական գործերով, պաշտպանական մարտերում ցուցաբերած հմտությամբ, թշնամուն միշտ անակնկալի բերելու վարպետությամբ: Այդպես ճանաչեցին Ռազմիկ Թամոյանին Մարտակերտում, որի համար նա կռվեց և նվիրաբերեց իր մատաղ կյանքը՝ 1995 թվականի մայիսի 9-ին:

Ռազմիկ Թամոյանի հուղարկավորման արարողությունը տեղի ունեցավ հայրենի՝ Բաղրամյանի շրջանի Շենիկ գյուղի եզդիական գերեզմանոցում:



ՈՒՍՈՅԱՆ ՌԱՇԻԴ
Р'ӘШИДЕ Ә'Т'ЕР
(1950-1995)

Նրա մահվան բոթը խոր վիշտ պատճառեց ինչպես հարազատներին, այնպես էլ բոլոր համագյուղացիներին: Նախ, որ զոհվել էր արցախյան մարտերի հերոսը, եզդի ժողովրդի զավակը, որ իր սխրանքներով փառքով էր պսակում հարազատ ժողովրդին և որ նա երկու տարի կռվելով՝ չճաշակեց վերջնական հաղթանակի քաղցրությունը:

Ռաշիդ Ուսոյանն ապրեց 45 տարի: Ծնվել է 1950 թվականին՝ Երևանի էրեբունի համայնքի Ջրաշեն գյուղում, ավարտել տեղի դպրոցը, անցել աշխատանքի: Բայց Արցախը կանչում էր օգնության, և Ռաշիդը մեկնեց ռազմաճակատ: Կռվեց արիաբար, վաստակեց քաջի համբավ:

Ռաշիդ Ուսոյանը զոհվեց 1995 թվականին:

EZDIKI.COM



ՀԱՍՈՅԱՆ ՍՈՒՐԻԿ
СУРИКЕ Ə'МО
(1976-1996)

Արմավիրի մարզի Շենավան գյուղում, հայրենի գյուղի դպրոցում կրթություն ստացած, ուսուցիչների և աշակերտների սիրուն ու հարգանքին արժանացած Սուրիկ Հասոյանին վիճակված էր երկու տարի շարունակ պաշտպանել սահմանամերձ շրջանները, հատկապես Կրասնոսելսկի սահմանները: Նա նման էր արհեսավարժ զինվորականի, սառնասիրտ էր, խոհուն ու քաջարի: Ընկերները հիշում են նրա խոսքը. «Ազատության համար պայքարը սուրբ գործ է, այս նշանաբանով պետք կռվել ու հաղթել»: Այդպես էլ մարտնչեց նա՝ եզդի ժողովրդի զավակ Սուրիկ Հասոյանը, որը զոհվեց 1996 թվականի մարտի 6-ին Կրասնոսելսկի շրջանի Վահան գյուղի պաշտպանական մարտերում:

Սուրիկ Հասոյանի աճյունը հողին հանձնվեց հայրենի գյուղում՝ Արմավիրի մարզի Հուշակերտի եզդիական գերեզմանոցում:



ՄՍՏՈՅԱՆ ԱՐՄԵՆ
АРМЕНЕ МЬСТО
(1976-1996)

Արցախում հիմա խաղաղ է, Արցախի ժողովուրդը և համայն հայությունը վայելում է հաղթանակի բերկրանքը: Բայց այդ հաղթանակը ձեռք է բերվել խիզախ մարտիկների կյանքի գնով, զոհեր, որոնց շարքերում են նաև եզդի ազատամարտիկները, որոնցից է նաև Արմեն Մստոյանը:

Արմենը ծնվել է Արմավիրի մարզի Ամասիա ավանում, սիրել է հայրենի լեռներն ու լեռնալանջերը, հայրենի գյուղն ու հարազատ դպրոցը, ուր սովորել է նա:

1995 թվականի նոյեմբերից մինչև 1996 թվականի սեպտեմբերը Արմեն Մստոյանը մասնակցել է Մարտակերտի շրջանում ծավալված մարտական գործողություններին և անմահացել է 1996 թվականին՝ իր մատաղ կյանքը նվիրելով Արցախի ազատության սրբազան գործին:

Արմեն Մստոյանը իր վերջին հանգրվանը գտավ հայրենի՝ Արմավիրի մարզի Ամասիա գյուղի գերեզմանատանը:



ՍԱԴՈՅԱՆ ԳՐԻՇԱ
ГРИШЕ МƏМЕ
(1957-1997)

Ինտերնացիոնալիզմը, բարեկամությունը, հայրենասիրությունը եզդիների լավագույն ավանդույթներից են, որոնք փոխանցվում են ավագ սերունդներից կրտսերներին, դրանով է նաև ամրապնդվում եզդի և հայ ժողովուրդների դարավոր բարեկամությունը:

Իրենց որդիներին բանակ ճանապարհելիս այս ավանդույթներն են հիշեցնում ծնողները, համոզված, որ նրանք հավատարմորեն կպահպանեն իրենց պապերի պատգամածները:

Այդ հավատով է զորակոչվել հայոց բանակ նաև Աշտարակում 1957 թվականին ծնված Գրիշա Սադոյանը, որն Արցախում մի շարք մարտերի մասնակցեց, դարձավ իր մարտական ընկերների սիրելին, բարի ընկերն ու խորհրդատուն: Սակայն կատարվեց անսպասելին. Գրիշան զոհվեց Օմարի լեռնանցքում 1997 թվականի հունվարի 17-ին: Նրա աճյունն ամփոփվեց հայրենի Աշտարակում:



ՆԱԲՈՅԱՆ ՍԱԲՐԻ ՍԵԲՐԻԵ Կ'ԱԼԱՇ (1978-1997)

Աշտարակի շրջանի Շամիրամ գյուղի ուսուցիչները սիրով ու ակնածանքով են արտասանում իրենց նախկին սանի՝ Սաբրի Նաբոյանի անունը: Պարտաճանաչ ու ընկերասեր աշակերտ էր նա, ընթերցասեր ու հարցասեր: Հետո նա զորակոչվեց հայոց բանակ: Չհասցրեց իր տեղը գտնել կյանքում, երբ թշնամու գնդակը խոցեց նրան: Սաբրին թեև ծառայեց կարճ ժամանակ, բայց այստեղ էլ կարողացավ ճանաչում գտնել,խիզախության օրինակներ ցույց տալով, դառնալ ընկերների և հրամանատարության սիրելին:

Սաբրի Նաբոյանը զոհվեց Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանում, 1997 թվականի հունվարի 27-ին: Անցնում են տարիները, սակայն չի խամրում եզդի ժողովրդի անվեհեր զավակի փառքն ու հիշատակը:

Նրա աճյունը հողին հանձնվեց հայրենի գյուղում՝ Աշտարակի շրջանի Շամիրամի գերեզմանատանը:



ԱՍՈՅԱՆ ՈՒՍԼՎ ՍՅԼԲԵ ՅՕհՐԱԲ (1978-1997)

Ուսլվ Ասոյանը չհասցրեց հարուստ կենսագրություն ունենալ: Ծնվել է 1978 թվականին: 19-ամյա երիտասարդ էր, երբ զորակոչվեց բանակ: Իր հասակակիցների նման աշխույժ էր, ժպտերես ու մարդամոտ: Նրանից չէին դժգոհում ո՛չ հարևանները, ո՛չ ուսուցիչները: Նա սիրում էր կյանքը, հայրենիքը, կապույտ երկինքը, որոնց պաշտպանելու համար էլ զինվորագրվեց արցախյան պայքարին, մասնակցեց մի քանի մարտերի, արժանացավ հրամանատարության խրախուսանքին:

Ուսլվ Ասոյանը շատ երազանքներ ուներ, որոնք, սակայն, մնացին անկատար: Բայց նրա անցած ուղին, կենսագրության այդ էջը պայծառ էր ու անմոռաց: Թեև նա զոհվեց 1997 թվականի փետրվարի 4-ին, բայց նրա սխրանքն անմահ է. քաջերին մահ չկա:

EZDIKI.COM



ՇԱՄՈՅԱՆ ՆՎԵՐ
НВЕРЕ СУРЕН
(1977-1997)

Ռազմաճակատից ստացված նամակը ոչ միայն ծնողների ու հարազատների, այլև բոլոր համագյուղացիների ուրախությունն էր, հաղթանակի հավատի վկայությունը: Այդպիսին էր Նվեր Շամոյանի պատճառած ուրախությունը, որ համակեց նրա բոլոր համագյուղացիներին՝ Մասիսի շրջանի Խարբերդ գյուղի բոլոր բնակիչներին: «Ուր հայրենիքի սերն է պահանջում, այնտեղ թշնամու ուժն է նահանջում»,- գրել էր Նվեր Շամոյանը:

Կարճատև կյանք ունեցավ Նվերը՝ ընդամենը քսան տարի, ապրեց 1977-1997 թվականներին, բայց հասցրեց սովորել հայրենի գյուղում, զորակոչվել հայոց բանակ, մասնակցել մի շարք մարտերի, քաջի համբավ վաստակել:

Նվեր Շամոյանը զոհվեց 1997 թվականի հունիսի 12-ին՝ Կրասնոսելսկի մարտերում: Թաղված է հայրենի գյուղի գերեզմանատանը:



ԳԵԼՈՅԱՆ ՏԻՏԱԼ ТИТАЛЕ ШАВО (1976-1997)

Ընկերների, հարազատների, ուսուցիչների հուշերում Տիտալը մնում է նույն պայծառ ու ժպտերես տղան, ինչպես նրան ճանաչում էին հայրենի Մասիսի շրջանի Ռանչպար գյուղում: Դպրոցում ետ չէր մնում ընկերներից, աչքի էր ընկնում պարտաճանաչությամբ, ձգտում էր սիրով կատարել ուսուցիչների բոլոր հանձնարարությունները, որի համար արժանանում էր նրանց գովասանքին, ընկերների վստահությանը, որովհետև միշտ օգնության էր հասնում ետ մնացողներին: Այդպիսի պարտաճանաչություն էր ցուցաբերում նաև բանակում, ձգտելով անթերի կատարել հրամանատարության բոլոր առաջադրանքները: Պատահական չէ, որ մի շարք մարտական գործողություններում նա դրսևորեց խիզախություն, արժանացավ խրախուսանքների:

Տիտալ Գելոյանի կյանքի թելը կտրվեց 1997 թվականի մայիսի 16-ին Մարտակերտում: Սակայն այդ կյանքը շարունակվում է խիզախ մարտիկի մասին պատմվող հերոսական զրույցներում:

Տիտալ Գելոյանն իր վերջին հանգրվանը գտավ հայրենի Մասիսի շրջանի Ռանչպար գյուղի գերեզմանատանը:



ԹԱՄՈՅԱՆ ԶՈՀՐԱԲ ՅՕհՐԱԲԵ ՄՅՄԵ (1976-1997)

Կարճ, բայց բուռն կյանք ապրեց Արմավիրի մարզի Կեսարիա գյուղի զավակ Զոհրաբ Թամոյանը:

1976 թվականին ծնված Զոհրաբը հաջողությամբ ավարտեց հայրենի գյուղի դպրոցը, անմոռաց հուշեր թողնելով դպրոցի կամարների տակ, որոնք միշտ կհիշեցնեն դպրոցի նախկին սանին, հայոց բանակի խիզախ մարտիկ Զոհրաբ Թամոյանին: Դպրոցն ավարտելուց հետո Զոհրաբը զորակոչվեց հայոց բանակ, ծառայեց Արցախում, իր կարգապահությամբ, պատրաստակամությամբ արժանանալով հրամանատարության դրվատանքին և խրախուսանքին:

Դժվար է հավատալ, որ այլևս մեզ հետ չէ հայրենիքի զինվորը, որն ընկավ մարտական դիրքում՝ 1997 թվականի հուլիսի 20-ին Արցախի Տոնաշեն գյուղում: Ճիշտ է ասված. «Ոչ ոք չի՛ մոռացվում, ոչինչ չի՛ մոռացվում»: Անմոռաց է Զոհրաբ Թամոյանի անունը, անմոռաց է նրա սխրանքը:



Թ-ԱՄՈՅԱՆ ՍԱՀԻԴ ԱԶԻԶԻ ՍԵհԻԴԵ ԱԶԻԶ (1972-1997)

Արցախյան հերոսամարտը հերոսացրեց նաև նրան՝ Սահիդե Ազիզին, որը ոգևորված իր հայրիկի՝ Հայաստանի Հանրապետության Եզդիների ազգային միության նախագահ Ազիզ Թամոյանի հայրենասիրական գործունեությամբ, կանգնեց նրա կողքին, դարձավ նրա օգնականն ու զինակիցը, աջակիցն ու զորավիգը:

Սահիդ Թամոյանը ազգային զարթոնքի օրերին միշտ զգաստ էր ու կարգապահ, որպես զինվորական շտաբի անդամ պատրաստ էր կատարելու բոլոր հանձնարարությունները, պատրաստ էր դիմել զոհողության՝ հանուն այն մեծ գաղափարների, որի համար պայքարում էր եզդի ժողովուրդը: Նա մասնակցեց Երասխավանի, Նոյեմբերյանի, Լաչինի, Մարտակերտի, Ֆիզուլու, Ստեփանակերտի ճակատամարտերին և մյուս ազատամարտիկների նման փառքով պսակեց իրեն:

Բայց կատարվեց անսպասելին. 1997 թվականի հունվարի 11-ին լույս 12-ի գիշերը անսպասելիորեն դադարեց բաբախելուց Սահիդ Թամոյանի ազատատենչ սիրտը:

Նրա աճյունն ամփոփվեց Զովունի գյուղի Ամո թաղամասում: Նրա ծանոթները, ընկերները, հարազատները, բոլորը սգացին նրա մահը, համարելով, որ նա էլ իր ուժերը չխնայեց Արցախյան հերոսամարտում հաղթանակի հասնելու համար:



ՊՈԼՈՅԱՆ ՌԱԶՄԻԿ Ր'ԱԶՄԻԿԵ Ահ'ՄԱԴ (1977-1998)

Հայոց բանակի մարտիկ Ռազմիկ Պոլոյանը ծնվել է 1977 թվականին Արմավիրի մարզի Արգավանդ գյուղում: Դպրոցական տարիներին աչքի է ընկել ընկերների և ուսուցիչների նկատմամբ ջերմ վերաբերմունքով, կիրք վարվելակերպով, կարգապահությամբ: Ոչ միայն ընտանիքում, այլև ընկերների և անծանոթների միջավայրում նա միշտ համեստ էր, բարյացկամ ու պատրաստակամ օգնելու, սատար կանգնելու նեղության մեջ գտնվողներին, օգնության կարիք ունեցողներին: Այդպիսի կարգապահությամբ նա աչքի ընկավ նաև հայոց բանակում, Արցախում ծառայած տարիներին, ուր բազմիցս արժանացավ պատվոգրերի ու շնորհակալությունների:

Ռազմիկ Պոլոյանը վախճանվեց 1998 թվականին, խոր վիշտ պատճառելով մարտական ընկերներին, հարազատներին, բարեկամներին: Նրա աճյունն ամփոփվեց հայրենի գյուղի՝ Արմավիրի մարզի Արգավանդ գյուղում:



ԳԱԼՈՅԱՆ ՀԱՄԼԵՏ hAMЛETE Ə'ЛИХАН (1979-1998)

Համագյուղացիների հիշողության մեջ Համլետ Գալոյանը մնաց որպես եռանդուն և աշխատասեր պատանի, օրինապահ ու կարգապահ անձնավորություն, բարի և հոգատար ընկեր: Այդ բարի համբավը նա վաստակել էր դպրոցում սովորելու տարիներին, արժանացել ուսուցիչների սիրուն ու համակրանքին:

Համլետ Գալոյանը ծնվել է 1979 թվականին Աշտարակի շրջանի Ագարակ գյուղում, սովորել է հայրենի գյուղի դպրոցում:

Նոր էր սկսվել Արցախյան հերոսամարտը, երբ Համլետ Գալոյանը հայտնվեց իրադարձությունների կիզակետում: Կարճ ժամանակում եզդի երիտասարդը տիրապետեց հրազենի գաղտնիքներին, մասնակցեց մի քանի մարտերի, կոփվեց ու ամրացավ, վաստակեց մարտական ընկերների սերն ու համակրանքը:

Համլետ Գալոյանը վախճանվեց 1998 թվականի մարտին և հողին հանձնվեց հայրենի Խաթունարխ գյուղում:

1. ԵԶԴԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐԻՑ

Եզդիները աշխարհի հնագույն ժողովուրդներից են: Նրանց նախահայրենիքը, ըստ հավաստի աղբյուրների, Հնդկաստանն է, ավելի ստույգ՝ Բըմբա (Բոմբեյ) քաղաքը: Եզդիները հեթանոս են: Եզդիներն արևապաշտ են, նրանց կրոնը շարֆադինն է: Եզդիները երկրպագում են միաստվածություն և նրա երրորդությանը՝ Մալակե Թաուսին, Կարմիր Սուլթան Եզիդին, Շեխ Ադիին: Եզդիները պաշտում են Մալակե Թաուսին սիրամարգի տեսքով: Ընդհանրապես սիրամարգի պաշտամունքի առաջին տարրեր պատմական վաղ ժամանակներում լայն տարածում ունեին Հնդկական թերակղզում, Մերձավոր և Միջին Արևելքում ապրող ժողովուրդների մեջ և այդ պաշտամունքն արտացոլվել է նրանց հավատալիքներում, հոգևոր և նյութական մշակույթի հուշարձաններում:

Ըստ ժողովրդական բանահյուսության և ավանդապահ, բանիմաց ու գիտակ տարեց եզդիների, մեր նախնիները նոր տարվա առթիվ աղոթելով՝ ասում էին «Այսօր Նոր տարի է, թո՛ղ շնորհավոր լինի թագավորների թագավորի (փաթշե փաթշա) և ամբողջ աշխարհի ժողովուրդների Նոր տարին: Թո՛ղ նոր թագավորը գա» ասելով ի նկատի են ունենում աստծուն: Հնուց ի վեր կա նաև այլ բացատրություն: Դա այն է, թե «Այսօր երկրի վրա նոր թագավոր եղավ: Նոր թագավորը աշխարհին թո՛ղ բերի խաղաղություն և լիություն, թող ժողովուրդներին փորձանքից հեռու պահի»: Ինչպես տեսնում ենք թագավոր և թագ բառերի շուրջն է պտտվում խոսակցությունը: Եզդի ժողովուրդը աստծուն հարգելով աստծու թագը համարում է Թաուս սրբություն:

Մեր խորին համոզմամբ, ելնելով բանահյուսության տվյալներից, թաուս բառն առաջացել է թագ բառից: Աստծուն համարելով թագավոր և սրբացնելով նրա թագը, եզդիներն այն հեռավոր, վաղնջական ժամանակներում, դեռևս հինգ հազար տարի առաջ, առասպելական կերպարանափոխություն են կատարել՝ թագավոր, թագ բառերը սրբացվել են, կերպարանափոխվել, դարձել Մալաքե Թաուս: Հնագույն աղբյուրներում նույնպես հիշատակվում է, որ Մալաքե Թաուս նշանակում է թագավորի թագ: Թագի վրա ամրացվում էին սիրամարգի գեղեցիկ փետուրներ: Եվ Մալաքե Թաուսը այդպես էր պատկերվում՝ սիրամարգ-հրեշտակ: Հիշենք, որ սիրամարգն արևելքում համարվում է գեղեցկության և վեհության խորհրդանիշ, իմաստության և շուքի արտահայտություն: Եվ դարեր շարունակ, և մինչև օրս սիրամարգ-

հրեշտակը սրբացվել է որպես Աստծու փոխնորդ: Իսկ եզդիներն իրենց համարել են Մալաքե Թաուսի ժողովուրդ:

Ցավոք, պատմական այս իրողությունները չեն ուսումնասիրվել գիտնականների կողմից, չեն դարձել հասարակայնության սեփականությունը: Մինչդեռ թագավորի թագ, Մալաքե Թաուս, սիրամարգ-հրեշտակ առնչությունների ուսումնասիրությունը և դրանց լուսաբանումը լայն հնարավորություններ կտան աստվածաբանների, պատմաբանների գիտական պրպտումների, գիտական ճշգրտումների համար:

Եզդիների աստվածը գերբնական ուժով օժտված Խուդեն է, որը համարվում է տիեզերքի արարիչը: Ըստ եզդիների ազգային օրենքների՝ եզդին ծնվում է որպես եզդի և ոչ մի այլ ազգի ներկայացուցիչ չի կարող եզդի լինել:

Պատմական հեռավոր ժամանակներում, ժողովուրդների տեղաշարժերի ընթացքում, եզդիները Հնդկաստանից տեղափոխվեցին Խազալիե, Ավախե, Բիրմայե, Կանդահարե (Աֆղանստան) քաղաքները, սպա Իրան, որտեղ և դարձան արևապաշտ: Հետագայում եզդիները Իրանից տեղափոխվել են Բասրա, Քուֆ և Բաղդադ քաղաքները: 7-րդ դարից եզդիներն իրենց նախահոր անունով իրենց համարեցին եզդի: 683 թվականի, հոկտեմբերի 10-ին Քերբալայի դաշտում սպանվում է Շիա Ալու՝ Ալիիե Շերի որդի Հուսեյնը, այնուհետև ֆիզիկապես անհետանում է Կարմիր Սուլթան Եզիդը (նրա ճակատագիրը մինչև այսօր անհայտ է): Հիշենք, որ Քերբալայի դաշտում Հուսեյնի սպանությունից հետո մուսուլմանները կապույտ շոր են հագնում որպես սուգի նշան: Մինչև այսօր էլ կապույտ զգեստ հագնելը եզդիների համար մեղք է համարվում: Հիշենք նաև, որ Քերբալայի դաշտում, երբ Սուլթան Եզիդը ներկվեց կարմիր արյամբ, նա սկսեց կոչվել Կարմիր Սուլթան Եզիդ: Հետաքրքիր փաստ է և այն, որ եզդիների դրոշը մինչև Քերբալա եղել է սպիտակ (բե լաքաբիե): Քերբալայի կռվից հետո, ի նշան թափված կարմիր արյան, եզդիների դրոշը դարձավ կարմիր և սպիտակ ու այդպես էլ պահպանվում է մինչև այսօր: Շիաների ճնշման տակ եզդիները կրկին տեղահանվում են և հաստատվում Շարկ, Շամ (այժմ Դամասկոս), Մըսըր քաղաքներում:

Եզդիական բանահյուսության նմուշներից մեկի մեջ ասվում է.

«Կարմիր Սըլթան Եզիդը հարցնում է իր մորից. «Մայրիկ, ո՞վ է իմ հայրը»: «Քո հոր անունով է շենացել Շամը»,- պատասխանում է մայրը: Եզդիերեն դա հնչում է այսպես. «Քիե բավե մըն: Միրո, բավե տը փաթշաբու, ռակի ռաուստանբու, շըհըրե շամե Դամասկոս, սար Նավե վիյա ավաբու»:

11-րդ դարում՝ Շիխադու ժամանակ, եզդիները Շարկից և Շամից տեղափոխվում են Լալըշ, Շանգալ (Սինջար), Մոսուլ բնակավայրերը: Շիխադու ժամանակ ստեղծվեց եզդիների համար հադսադ՝ սահմանադրություն, ըստ որի կազմվեց կրոնական պառլամենտ յոթ անդամներով՝ Նասրդին, Սըջադին, Շեշըմս, Ֆարխադին (սրանք եղբայրներ են, Ըստիա Ջինի որդիները), Շիխըսըն, Հազմաման, Շեխուբաքր:

Ըստ Շեխ Ադիի կրոնական օրենքի՝ եզդիները բաժանվեցին երեք կաստայի՝ շեխեր, փիրեր, մրիդներ:

Շեխերը (կրոնական) իրենց հերթին բաժանվեցին երեք ենթակաստաների.

1.Վադանի - Շեխե Շիխսընա

2.Զըրզանի - Շեխե Շեշըմսա

3.Կաթանի - Շեխե շեխու բաքրա:

Սրանք համարվում են հանդերձյալ կյանքի եղբայրներ և միմյանց մեջ դնում են դաստ դամըն խարկա-քըլըկ: Այս երեք ենթակաստաները իրավունք չունեն ամուսնանալու միմյանց հետ: Այս արգելքը տևել է դարեր շարունակ և այսօր էլ գոյություն ունի:

2.Փիրեր (կրոնավոր) - որոշ ենթակաստաների փիրեր իրավունք չունեն ամուսնանալու միմյանց հետ, հատկապես փիրե հազմամաները, որոնք համարվում են քառասուն փիրերի փիրեր, իրավունք չունեն ամուսնանալու մնացած 40 փիրերի հետ: Սակայն վերջին շրջանում, չնայած կրոնական արգելքներին, Փիրե Օմարե Խալան, փիրե Իսեբիան, փիրե Մալկավեսա կաստաներն ամուսնանում են միմյանց հետ:

3.Մրիդները (աշխարհիկ) - ազատորեն կարող են ամուսնանալ կաստայի ներսում, բայց ոչ շեխերի, ոչ փիրերի հետ:

Բացի այդ, եզդիները պետք է պահպանեն ևս երեք օրենքներ, որոնք պարտադիր են բոլոր եզդիների համար և պետք է պահպանվեն սրբությամբ:

1. Դարբա խարկա կրոնավորի հանդերձն է, որին չպետք է հարվածել: Իսկ եթե այն հարվածվել է, մեղադրյալը եզդի չի համարվի և կենթարկվի կրոնական խիստ պատժի:

2.Դիսկա դընե, որ կոչվում է մրոտ կճուճ, նշանակում է, որ եզդին այլազգիների հետ ամուսնանալու, ընդհանրապես կապեր ունենալու իրավունք չունի, ունենալու դեպքում նա այլևս եզդի չի համարվի:

3.Շալպկե զեռին, որ նշանակում է ոսկե բաժակ, արգելվում է ամուսնությունը և կապը շեխերի, փիրերի ու մրիդների միջև. խախտողներն այլևս եզդի չեն համարվում:

Շեխ Ադու մահից հետո՝ 11-րդ դարում, եզդիների մի ստվար մասը

կրոնական շարժառիթներով Իրաքի հյուսիսային մասից տեղափոխվում է Թուրքիայի, Արևմտյան Հայաստանի, Կարսի, Մուշի, Վանի, Էրզրումի, Դիարբեքիրում Օրթալայի, Կարակոյի, Իգդիրի, Սինակի, Դիգոռի և այլ բնակավայրեր:

Վերջին տարիների նոր տվյալների համաձայն եզդիների թիվն աշխարհում անցնում է երկու միլիոնից: Եզդիների ամենախոշոր համայնքը մնում է Իրաքը, ուր ապրում է մեկ միլիոնից ավելի եզդի: Եզդիներ են ապրում Իրանում (100 հազար), ուր նրանք կոչվում են Մալաքե Թաուսի ժողովուրդ, Թուրքիայում (50 հազար), Ռուսաստանում (մոտ 300 հազար), Վրաստանում (50 հազար), Գերմանիայում (300 հազար), Սիրիայում (20 հազար), ինչպես նաև եզդիների ստվար համայնքներ կան Հնդկաստանում, Ավղանստանում, (վերջին երկու երկրներում եզդիներն իրենց համարում են Մալաքե Թաուսի ժողովուրդ): Հայաստանում եզդիների թիվը հասնում է շուրջ 60 հազարի:

Եզդիների հայրենիքը համարվում է Իրաքը: Նրանց սրբավայրը գտնվում է Իրաքի հյուսիսում, Լալըշի խոր ձորում, որը եզդիների հոգևոր առաջնորդի՝ Միրի (միրեշեխա) նստավայրն է:

Եզդիների լեզուն (էզդիկի) պատկանում է հնդեվրոպական ընտանիքի իրանական լեզվախմբին: Եզդիները դեռևս 11-րդ դարում ունեցել են իրենց այբուբենը 33 տառով, որ ստեղծվել են նեստորական այբուբենի հիման վրա: Այբուբենն ստեղծվել է շեխ Իսընի միջոցով (կըլըմա մըլըկ շիխըսըն): Հետագայում, արդեն 1921 թվականին, հայազգի Լազոն (Հակոբ Ղազարյանը) Հայաստանում ստեղծեց եզդիերեն այբուբեն՝ օգտագործելով հայերեն տառերի գծագրությունը: 1929 թվականին եզդիերեն այբուբենում օգտագործվեցին լատիներեն տառեր:Հեղինակներն էին Իսահակ Մորոգուլովը և Արաբ Շամիլովը: 1946 թվականից սկսեց գործել ռուսերեն այբուբենը, առանձին հնչյունների համար օգտագործելով լատիներեն տառեր: Նախածեռնողն էր Հաջիե Ջնդին:

Հայաստանը աշխարհում միակ երկիրն է, ուր եզդիները գրում են իրենց մայրենի եզդիերեն լեզվով և հանրային ռադիոյով ունեն ամենօրյա կեսժամյա հաղորդում: Եզդիերենը սովորում են 2-8-րդ դասարաններում, շաբաթական 2 ժամով: Այդպիսի դպրոցների թիվը Հայաստանում 20-ից ավելի է: Եզդիերեն ուսուցմամբ դպրոցներ են գործում Արմավիրի մարզի Արտաշար, Ֆերիկ, Զարթոնք, Կոտայքի մարզի Զովունի, Քանաքեռավան, Ջրվեժ, Արագածոտնի մարզի Շամիրամ, Ռյա թազա, Ալագյազ, Շենկանի, Դերեկ, Օրթաճիա, Սիփան, Ավշեն, Սանգառ, Ամրե թազա, Ջամշլու, Միրաք, Թալինի շրջանի Հակո, Գյալթո, Սորիկ, Թլիկ և այլ գյուղերում: Ցավոք, այդ դպրոցների մեծ

մասում այժմ չեն գործում եզդիերեն դասարանները՝ եզդիերեն դասագրքերի և եզդիների ուսուցիչների պակասության պատճառով:

1989 թվականի մարդահամարի տվյալներով եզդիների թիվը հանրապետությունում կազմում է 51 900 մարդ: Մարդահամարի փաստաթղթերում 60-70 տարվա տևական ընդմիջումից հետո վերջապես երևաց եզդի անունը: Թեև խորհրդային տարիներին՝ առաջին և երկրորդ մարդահամարների ժամանակ նշվում էր եզդի անունը, սակայն 30-ական թվականներից սկսած եզդի անունը վերացվեց, ավելի ճիշտ՝ նույնացվեց քուրդ անվան հետ: 1988 թվականին, երբ հայ ժողովուրդը ոտքի ելավ անիրավության դեմ, երբ սկսվեց Արցախյան ազատամարտը, սկսվեց նաև եզդիների ազգային զարթոնքը: Առաջին մեծ հաղթանակը եզդի անվան վերականգնումն էր, որի համար պայքարի ելավ եզդի ժողովուրդը: Ազիզ Թամոյանի գլխավորությամբ Մոսկվա մեկնեց եզդիների հատուկ պատվիրակություն, որն իր հետ տարավ 15 հազար ստորագրություն այն մասին, որ իրենք եզդի են և չեն ցանկանում քուրդ կոչվել: Պայքարը պսակվեց հաջողությամբ: Եվ 1989 թվականի մարդահամարի տվյալներով եզդիները կոչվեցին իրենց անունով՝ եզդի:

Պատահական չէ, որ Եզդիների ազգային միության պաշտոնաթերթ «Եզդիխանա» (նախկինում՝ «Եզդիների ձայն») թերթի ճակատին գրված է. «Ազգությունս՝ եզդի, լեզուս՝ եզդիերեն, կրոնս՝ շարֆադին»:

2. ԵԶԴԻ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈ ԼՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԼՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայերի և եզդիների բարեկամությունը դարերի պատմություն ունի: Դեռևս 1828 թվականին, Իրաքի Հանրապետության հյուսիսային մասում գտնվող Ռնդովանի մոտերքում, Մուսուլից ոչ հեռու, եզդի Միրզա աղան և հայ քեշիշ Պողոն (Պողոս քահանան) 10-հազարանոց հայ-եզդիական զորքով կռվեցին թուրք-քրդական 30-հազարանոց բանակի դեմ, անհավասար և ահեղ մարտերում նրանք անձնական օրինակով ոգևորեցին հայ և եզդի մարտիկներին, կենաց և մահու պայքարում հաղթեցին եռակի անգամ գերազանցող հակառակորդին, ոչնչացրին թշնամու գրեթե ողջ բանակը՝ քաջության հրաշքներ ցույց տալով: Իր հայ բարեկամների՝ Ռնդովան քաղաքի ուսուցիչ Պետրոս Խազարովի և Կիրակոս Առաքելյանի միջոցով Միրզա աղան նույնիսկ կապեր հաստատեց Կովկասյան առաջին կորպուսի գլխավոր հրամանատար-,

գեներալ-ֆելդմարշալ կոմս Պասկևիչի հետ:

Եզդի ժողովրդի վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ ավելի վառ դրսևորվեց 1915 թվականին, երբ եղեռնից փրկված, թուրքական յաթաղանից մազապուրծ 6 հազար հայերի Իրաքի եզդիները պատսպարեցին իրենց օջախներում, ապահովեցին հագուստով ու սննդով: Շանգալ լեռան բոլոր բեկերն ու իշխանները սուրբ գրքի վրա երդվեցին ոչ մի հայի չհանձնել թուրքերին և քրդերին, թեև նրանք բազմիցս պահանջում էին հանձնել բոլոր փախստականներին: Եզդիները բնակավայրերից փախչում են Սինջարի լեռներ, շարունակում կռիվը թուրքերի դեմ: Այդ կռիվներում զոհվեցին են 75 եզդի և շատ հայեր նահատակվեցին: 35 օր տևած կռիվներում բոլորը սնվում էին ոչխարի մսով: Կռիվներում սպանվեցին 285 թուրքեր ու քրդեր, շատերը վիրավորվեցին: Ավերվածությունները մեծ էին. հրդեհվեց 50-ից ավելի եզդիական գյուղ, 100 հազար ոսկու չափ ապրանք կողոպտվեց: Միր Իսմայիլի և Համե Շարոյի խնդրանքով անգլիացիները վերջապես 35-րդ օրը եկան, թուրքերը վռնդվեցին և հաստատվեց խաղաղություն:

1918 թ. տեղի ունեցած բախտորոշ իրադարձությունները ևս խոսուն վկայություն են հայ և եզդի ժողովուրդների բարեկամության ամրապնդման: Այդ բարեկամության խորհրդանիշ էր Զորավար Անդրանիկի և եզդի ժողովրդի արժանավոր զավակ Ջահանգիր աղայի ռազմական համագործակցությունը թուրքերի դեմ մղած կռիվներում: Սարդարապատի ճակատամարտի օրերին Ջահանգիր աղան և նրա հեծյալները անգնահատելի օգնություն ցույց տվեցին հայոց բանակին և աշխարհազորայիններին՝ նպաստելով հաղթանակի գործին:

Արցախյան հերոսամարտերում իրենց սխրանքներով փառաբանվեցին նաև եզդի ժողովրդի զավակները: Դեռևս փետրվարյան օրերին կազմակերպվեցին տասնյակ ու տասնյակ հանրահավաքներ, որոնց մասնակցեցին հազարավոր եզդիներ: Այդ հանրահավաքների ընթացքում հավաքագրվեցին հարյուրավոր կամավորներ Արցախի հերոսական ժողովրդին սատարելու համար: Ստեղծվեց Ուսրաբաղյան շարժմանը նպաստող կազմկոմիտե Ազիզ Թամոյանի ղեկավարությամբ: Պետական համալսարանում ստեղծվեց ռազմական շտաբ, որի անդամները եղան ռազմաճակատի գրեթե բոլոր հատվածներում: Եզդի երիտասարդները ամենուրեք կռվում էին քաջաբար: Կռվում էին ոչ միայն տղաները, այլև կամավոր աղջիկները: Շատերն էին ճանաչում Ասյա Խատոյանին, որը ռաղմաճակատից վերադարձավ հաշմանդամ դարձած, մի ոտքը թողած մարտերում:

Արցախի ազատագրման մարտերում հաղթանակի համար իրենց կյանքը զոհաբերեցին 30-ից ավելի եզդի ազատամարտիկների:

Նրանցից երեքի՝ Իսմայիլ Շարոյանի, Թեմուր Ջեյդինյանի, Գագիկ Հաջոյանի աճյունները ամփոփված են Եռաբլուրում: Պատերազմի ընթացքում եզդիների ազգային միությունը հայտարարեց դրամական միջոցների հանգանակություն, և եզդի ժողովուրդը հավաքեց 6 միլիոն ռուբլի, որը հանձնվեց ՀՀ Պաշտպանության նախարարությանը և Արցախի օգնության հիմնադրամին:

Պայքարի ժամանակահատվածում էր, որ տեղի ունեցավ Սպիտակի ավերիչ երկրաշարժը: Եզդիների համախմբումը հայ ժողովրդին սատար կանգնելու իսկական փորձաքար եղավ: Եզդիները ոչ միայն հարյուր-հազարավոր ռուբլիների դրամական և նյութական օգնություն ցույց տվեցին, այլև հարյուրավոր եզդի երիտասարդներ կազմակերպված ու միասնաբար մասնակցեցին աղետի գոտու փրկարարական աշխատանքներին: Ջուվունի գյուղի Ամո թաղամասի գրեթե բոլոր երիտասարդները Սպիտակում և Գյումրիում էին: Ավելին, Ամո թաղամասի եզդիները 250000 ռուբլի փոխանցեցին աղետյալների համար բացված հատուկ հաշվին:

Հայաստանի անկախության հռչակումից հետո հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր վիճակն ապրեցին նաև եզդի բոլոր ընտանիքները: Նրանք հայերի հետ միասին տարան բոլոր դժվարությունները, իրենց ակտիվությամբ ու համերաշխությամբ նպաստեցին ազատ և անկախ Հայաստանի կայացմանը: Սակայն ինչպես հայերի և Հայաստանի մյուս ազգությունների մեջ, այնպես էլ եզդիների շրջանում նկատվեց արտագաղթի երևույթ: Ցավով պետք է նշել, որ Հայաստանից հեռացան նաև մեծ թվով եզդիներ (ըստ որոշ այլ աղբյուրների՝ այդ թիվը հասնում է եզդի բնակչության մոտ 50%-ի):

Թեև որոշ դժվարությունների առկայությանը, որը վերաբերվում է հատկապես հեռագնա արոտավայրերից զրկվելուն, եզդիները շարունակում են իրենց ավանդական աշխատանքը՝ անասնապահությունը, մեծ նպաստ բերելով Հայաստանի տնտեսության զարգացմանը:

Եզդիների ազգային միությունը լայնամասշտաբ գործողություններ է ծավալել եզդի ժողովրդի միասնությունն ապահովելու, հայ և Հայաստանի մյուս ազգությունների հետ բարեկամությունն ամրապնդելու, ազգային մշակույթը զարգացնելու, ազգային ավանդույթները պաշտպանելու ուղղությամբ: Հատուկ ուշադրություն է նվիրվում եզդիերեն դասագրքերի ստեղծման հարցերին: Ազգային արժանապատվության բարձրացմանը նպաստում է եզդի մտավորականությանը օրենսդիր և գործադիր պետական մարմիններում ընդգրկելը, որի համար Եզդիների ազգային միությունը տանում է հետևողական աշխատանք: Առաջարկություններ են ներկայացվել Հայաստանի Հանրապետության նախագահին, Ազգային ժողովին, կառավարությանը

և համապատասխան կազմակերպությունների՝ ընտրական համակարգում բարեփոխումներ կատարելու, Ազգային ժողովում եզդի ներկայացուցիչ ունենալու համար: Եզդիներին մտահոգում են նաև եզդիների մշակութային կենտրոն հիմնելու, Գիտությունների ազգային ակադեմիայում եզդիագիտության բաժին ունենալու, Հայաստանի գրողների միությունում եզդի գրողների բաժանմունք ունենալու, Հանրային հեռուստատեսությամբ եզդիերեն հաղորդումների ժամ տրամադրելու, զոհված եզդի ազատամարտիկների հիշատակը փողոցների կամ դպրոցի անվանակոչումներով հավերժացնելու և բազմաթիվ այլ հարցեր:

Եզդի ժողովուրդը հայ ժողովրդի հետ ծեռք-ծեռքի տված գնում է դեպի նոր և պայծառ հորիզոններ, գնում է դեպի հավերժություն: Ահա եզդի ժողովրդի հավատամքը:

EZDIKI.COM

ԵԶԴԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԸ

Եզդի ժողովուրդը սրբությամբ ու ակնածանքով է ճշում իր ազգային տոները: Դա եզդիներին եզդի է պահում, դա եզդի ժողովրդի հարատևության երաշխիքն է:

Եզդի ժողովրդի ազգային կարևոր տոներն են.

Յուրաքանչյուր տարվա փետրվարի 13-ից հետո առաջին շաբաթվա երեքշաբթի, չորեքշաբթի եւ հինգշաբթի օրերը ծոմ են պահում:

Ուրբաթ օրը Խդր Նաբիի (Խդր Էլյազի) տոնն է:

Ապրիլի 13-ից հետո առաջին չորեքշաբթի օրը Մըլըկն Թաուուսի տոնն է, եզդիների Նոր տարին: Այդ օրը այցելում են գերեզմանատներ: Դա կոչվում է Չարշըմա սըրե սալե, մրի հատրնը դրրե մալե, այսինքն՝ տարեմուտի չորեքշաբթի օրը հանգուցյալներր գալիս են դռան առաջ: Երեքշաբթի օրը գաթա են թխում, որը տան անդամներին է բաժանվում չորեքշաբթի օրը:

Նույն չորեքշաբթին Մալաքե Ջայդինի եւ Մամե Շվանի օրն է: Նույն չորեքշաբթին սուրբ Լալըշում կոչվում է Չարշամա սոր՝ Կարմիր չորեքշաբթի:

Դեկտեմբերի 13-ից հետո առաջին երեքշաբթի, չորեքշաբթի եւ հինգշաբթի օրերը ծոմ են պահում: Ուրբաթ օրը Կարմիր Սըլթան Եզիդի տոնն է: Հաջորդ շաբաթվա հինգշաբթի օրը Շեխմսի ծոմի օրն է:

Յուրաքանչյուր եզդի պետք է հիշի այս կարևոր տոները եւ սրբությամբ պահպանի նախնիներից ավանդված սովորույթներն ու ծեսերը:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Վաղուց են լռել արկերի պայթյունները արցախյան հողում: Հաղթանակի դրոշներն են փողփողում ամենուրեք, հազարամյա Շուշին նորից շնչում է ազատ ու անկաշկանդ, ծնունդ է առել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Եվ, իրավամբ, եզդի ժողովուրդը այդ ամենը համարում է նաև իր հայրենանվեր նվիրումի արդյունքը:

Զոհվածների հիշատակն անմահ է: Թարմ ծաղիկներ են դրվում զոհվածների շիրիմներին, բարեկարգվում են գերեզմանները, պետությունը օգնության ձեռք է մեկնում զոհվածների ընտանիքներին, կյանքը շարունակվում է:

Եզդիների ազգային միության նախագահության ուշադրությունից չի վրիպում ազատամարտիկների հետ կապված ոչ մի հարց: Նյութական օգնություն է ցույց տրվում նրանց ընտանիքներին, հոգատարություն է ցուցաբերվում ազատամարտիկների, նրանց հարազատների, բոլորի նկատմամբ: Հերոսական օրերի շունչն զգացվում է զրույցներում, հուշերում, հանդիսությունների ժամանակ, ամեն օր, ամեն ժամ:

Ե՛վ արցախյան հերոսամարտի օրերին, և՛ այսօր, և՛ հետագայում իրենց մեծ դերն են խաղացել և խաղալու են եզդի ժողովրդի զավակները, որոնք հեռու չկանգնեցին մեծ պայքարից, իրենց անմիջական օգնությամբ նպաստեցին հաղթանակի գործին:

Եզդիների ազգային միության նախագահությունը շնորհակալություն է հայտնում նաև թիկունքում հերոսություն ցուցաբերած եզդիներին և նրանցից մի քանիսի անունները զետեղում է գրքի վերջում՝ որպես ցուցաբերած ծառայությունների համեստ գնահատական:

Հաջոյան Սուրիկ - Աշխարհի եզդիների ազգային միության փոխնախագահ

Թամոյան Հասան - ՀՀ Եզդիների ազգային միության փոխնախագահ

Աղայան Փաշիկ - ՀՀ Եզդիների ազգային միության նախագահության անդամ

Աղայան Մաջիթ - ՀՀ եզդիների ազգային միության նախագահի խորհրդական

Հասոյան Մրազ - ՀՀ Եզդիների ազգային միության նախագահության անդամ

Ամարյան Արիֆ - ՀՀ Եզդիների ազգային միության վերստուգիչ հանձնաժողովի նախագահ

Բաքոյան Սիաբանդ - «Էզդիխանա» կուսակցության նախագահ

Թամոյան Ահմադ - Աշխարհի եզդիների ազգային միության նախագահի խորհրդական

Մամոյան Օմար - ՀՀ Եզդիների ազգային միության վերստուգիչ հանձնաժողովի անդամ

Հասոյան Գագո - ՀՀ Եզդիների ազգային միության Կոտայքի մարզային կոմիտեի նախագահ

Ավդալյան Սուրիկ - ՀՀ Եզդիների ազգային միության Նաիրիի տարածքային կոմիտեի նախագահ

Ռասոյան Քյարամ - ՀՀ Եզդիների ազգային միության Քանաքեռ-Զեյթուն տարածքային կոմիտեի նախագահ

Միեյան Ռոմիկ - ՀՀ Եզդիների ազգային միության Խարբերդի կոմիտեի նախագահ

Կշտաև Ռոստամ - ՀՀ Եզդիների ազգային միության Արմավիրի մարզային կոմիտեի նախագահ

Խուդոյան Օնիկ - ՀՀ Եզդիների ազգային միության Արտաշատի տարածքային կոմիտեի նախագահ

Ղասոյան Անդրանիկ - ՀՀ Եզդիների ազգային միության Արարատի մարզային կոմիտեի նախագահ

Ալոյան Հոտո - ՀՀ Եզդիների ազգային միության անդամ

Բաբայան Միքայել -ՀՀ Եզդիների ազգային միության անդամ

Ամարե Աբբաս - ՀՀ Եզդիների ազգային միության անդամ

Ազմանյան Խասե - ՀՀ Եզդիների ազգային միության կանանց կոմիտեի նախագահ

Օզմանյան Քյարամ - ՀՀ Եզդիների ազգային միության անդամ, ազգային բարերար

Փարսադանյան Ալբերտ - «Էզդիխանա» թերթի խմբագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ ---------- 3
ԱՐՑԱԽՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՆՎԻՐՅԱԼՆԵՐԸ ---------- 4
ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ՈՒՂԵԿԻՑՆԵՐԸ ---------- 8
ՋՈՀՎԱԾ ԵՋԴԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐ ---------- 14
ՍԱՂՈՅԱՆ ԱԳԻՏ ---------- 15
ՇԱՌՈՅԱՆ ԻՍՄԱՅԻԼ ---------- 16
ՋԵՅԴԻՆՅԱՆ ԹԵՄՈՒՐ ---------- 17
ՀԱՋՈՅԱՆ ԳԱԳԻԿ ---------- 18
ԲԱՔԻՐՅԱՆ ՄՈՒՍԱ ---------- 19
ՌԱՍՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ ---------- 20
ՔԱԼԱՇՅԱՆ ԳԱԳԻԿ ---------- 21
ԱՎԴԱԼՅԱՆ ՕՍԱՐ ---------- 22
ՀԱՋՈՅԱՆ ԹՈՌՈՒՆ ---------- 23
ՀՈՍԵՅԱՆ ՀԱՍԱՆ ---------- 24
ԳՈՒԼՈՅԱՆ ԲԸՐՈ ---------- 25
ՉԱՏՈՅԱՆ ԲԱՐՋԱՆԻ ---------- 26
ԽՈՒԴՈՅԱՆ ԲԱՐՋԱՆԻ ---------- 27
ԿՈՏԻԵՎ ԼԵՈՆԻԴ ---------- 28
ՄԻՐՋՈՅԱՆ ՍԱՀԻԴ ---------- 29
ՍԱՂՈՅԱՆ ՅԱՇԱ ---------- 30
ՍՈՒԼԹԱՆՅԱՆ ՂՈՒԼԻԽԱՆ ---------- 31
ՀԱՋՈՅԱՆ ՆՈՐԻԿ ---------- 32

ՀԱՄԶՈՅԱՆ ԹՈՈՈՒՆ ----------
ՄՀՈՅԱՆ ԱԶԻԶ ----------
ՈՒՍՈՒԲՅԱՆ ԱԼԻԿ ----------
ՄՍՏՈՅԱՆ ՍԻԱԲԱՆԴ ----------
ՀԱՄԶՈՅԱՆ ՅՈՒՐԱ ----------
ԹԱՄՈՅԱՆ ՌԱԶՄԻԿ----------
ՈՒՍՈՅԱՆ ՌԱՇԻԴ ----------
ՀԱՍՈՅԱՆ ՍՈՒՐԻԿ ----------
ՄՍՏՈՅԱՆ ԱՐՄԵՆ ----------
ՍԱԴՈՅԱՆ ԳՐԻՇԱ ----------
ՆԱԲՈՅԱՆ ՍԱԲՐԻ ----------
ԱՍՈՅԱՆ ՈՒՍԲՎ ----------
ՇԱՄՈՅԱՆ ՆՎԵՐ ----------
ԳԵԼՈՅԱՆ ՏԻՏԱԼ ----------
ԹԱՄՈՅԱՆ ՋՈՀՐԱԲ ----------
ԹԱՄՈՅԱՆ ՍԱՀԻԴ ԱԶԻԶԻ ----------
ՊՈԼՈՅԱՆ ՌԱԶՄԻԿ ----------
ԳԱԼՈՅԱՆ ՀԱՄԼԵՏ ----------
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ
1. ԵԶԴԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐԻՑ ----------
2. ԵԶԴԻ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ
ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ ----------
ԵԶԴԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԸ ----------
ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ ----------

ԱԶԻԶ ԱՄԱՐԻ ԹԱՄՈՅԱՆ
АЗИЗ АМАРОВИЧ ТАМОЯН

ԵԶԴԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՍԽՐԱՆՔԸ

ԵԶԴԻՆԵՐՆ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏՈՒՄ

EZDIKI.COM

Հրատարակիչ տնօրեն՝ Վահրամ Մնացականյան
Խմբագիր՝ Ալբերտ Փարսադանյան
Համակարգչային ձևավորում՝ Խոսրով Հակոբյան

Ստորագրված է տպագրության 4.10.2002թ.
Ծավալը՝ 4 տպագրական մամուլ:
Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 300:

«ՎՄՎ-ՊՐԻՆՏ» հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ 2002